№ 249 ՈՒՐԲԱԹ 8 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1913 ՈՒՐԲԱԹ 8 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 249

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ

ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Ко, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Կիեւում՝ Большая 38, Պարիզում՝ Площадь Биржи 8

1913 Թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 Թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. Խորհուրդը

հրաւիրում է պ. պ. անդամներին Ընկերութեան

II ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,

որը կայանալու է շաբաթ, նոյեմբերի 9-ին, երեկոյեան ժամը 7½-ին, Ընկ. դահլիճում (Արաս-Աբաղեան հրապարակ, № 7, սեփ. տուն)։

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Մի քանի ճիւղերի նախահաշիւների քննութիւնը և հաստատումը։
2) Առեւտրական բանկի ակցիաներ գնելու մասին։
3) Զեկուցումն հանգուցեալ Նինա Տէր-Ղազարեանի կտակի և Փեփրոնիա Զարգեղեանի Նուիրատւութեան մասին։
4) Զեկուցումն Պեատիգորսկի ուսուցչական սանատորիային օգնելու հարցի մասին։
5) Ընկերութեան ընդհանուր լիազոր ունենալու հարցը։
6) Զեկուցումն պ. Ա. Աթանասեանի՝ լեռնային շրջաններում անբերրիութիւնից վնասված գիւղացիների կարիքների մասին։
7) Ընթացիկ հարցեր։

Այս ժողովը լինելով երկրորդը՝ կայանալու է որքան անդամ էլ ներկայ լինի։

տռ. 1011. 2—1

ՅԱՒԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐ
ՍԻՄԷՕՆ ԶԱՒԱՐԵԱՆ
ԿՈՍՏ. ԽԱՏԻՍԵԱՆ

«ՏԱՐԱԶԻ» հոկտեմբերեան ՀՐԱՏԱՊ №-ը անթիւ պատկերներով և յօդուածներով։

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ։

Վերադիր վճարով եւ ապառիկ պատուէր չէ ընդունվում։

ԴԻՄԵԼ՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ. Головинскій пр. 41.

(օ. մ.) տռ. 31. 5-4

Առաջնակարգ ցիրկ

ԵՂ. Ք.

ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Այսօր, ուրբաթ, նոյեմբերի 8-ին, տեղի կունենայ ցիրկային խաղեր ներկայացում մասնակցութեամբ բոլոր արտիստների։ Կրմբշամարտեն—Ժան-Սարատիէն՝ Նեգր Ցոմ-Սայէրի հետ, Մայսուրաձէն՝ Իվան Կայինի հետ, Լուկա Կոալեճվ՝ Զալեվսկիի հետ, Մոխանուրան՝ Սեպնիկի հետ։

Ներկայացման սկիզբը ժամը 8-ին, ըմբշամարտի սկիզբը ժամը 9½-ին, իսկ ներկայացման աւարտը ժամը 11-ին։

տռ. 1008. 1—1

ԿՈՐՑՐԵԼ ԵՄ
ԽԱՂԱՐԿՈՒ ՏՈՄՍԵՐ

I փոխառութեան № 12153/40.
II » № 16599/41.

Խնդրում եմ գտնողներին յանձնել Գանձարանում ինձ և ստանալ 200 ր. վարձատրութիւն։

ՊԱՒԷԼ ՆԱՆԱՍԵԱՆՑ

(ա. օ.) տռ. 1010. 3—1

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Վերադառնալով արտասահմանից վերանորոգեց ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23. тел. 7—92.

(ա.օ.) տռ. 977. 100—7

ԲԺԻՇԿ

Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ

Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների։

Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8

Նիկոլաեւսկայա փ. № 39. տ. Զաքէթեանի։

(չ.ու.) տռ. 901. 100—5

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ ԹԷ՞ ՖՈՆԴԵՐ

Հրապարակի վրա է դրված Դպրոցական Ֆոնդի ուժեղացման խնդիրը։

Այդ խնդիրը հայ ժողովրդի համար կեանքի և մահվան խնդիր է։

Որովհետեւ հայ ժողովրդի ապագան, ազգային ինքնուրոյնութեան ապագան կախված է հայոց ազգային դպրոցներից։

Հայոց լեզուի և գրականութեան պահպանութիւնը, յարատեւումը և բարգաւաճումը կախված է հայոց ազգային դպրոցներից։

Իսկ դպրոցներ, հայ ժողովրդական-ծխական դպրոցներ, մանաւանդ գիւղական դպրոցներ, հայ ժողովրդի, ամենամեծ մասը կազմող զանգուած՝ գիւղացիութեան համար, մենք շատ և շատ քիչ ունենք և եղածներն էլ կամ անապահով են, կամ փակվելու վտանգի ներքոյ։

Հետեւաբար, պէտք է մի կերպ ապահովել եղած դպրոցների գոյութիւնը և նոր դպրոցներ բանալ հետզհետէ։

Եւ ահա դրա միակ միջոցն է Դպրոցական Ֆոնդի ստեղծումը։

Եւ որովհետեւ այդ գեղեցիկ միտքը արդէն իրագործված է, որովհետեւ համազգային մեծ յոբելեանը յաւերժացնելու համար ներկայ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատել է այդ ֆոնդը, մնում է մեզ միայն ուժեղացնել այդ ֆոնդը, վերածել նրան մի այնպիսի դրամագլխի, որ կարող լինի գոհացում տալ կարիքներին և իրագործել առաջադրած նպատակը։

Թէ Դպրոցական Ֆոնդը ուժեղացնելը ամենաէական և հրատապ կարիք է ներկայացնում, դրա մասին ոչ մի կասկած լինել չէ կարող։

Բայց այդ ուժեղացումը կարող է իրագործվել միայն այն ժամանակ, երբ մեր բոլոր գործողութիւնների մէջ, երբ հայոց դպրոցների վրա խնամք և հոգս տանող բոլոր հաստատութիւնների միջև համերաշխութիւն և գործունէութեան միակերպութիւն լինի։

Դպրոցական Ֆոնդը, մեր կարծիքով, մի՛ պէտք է լինի և ոչ մի քանի։ Մի քանի ֆոնդերի գոյութիւնը, այն էլ տարբեր հաստատութիւնների ձեռքում, կը վնասէ միութեան և համերաշխութեան գաղափարին և կը վնասէ ընդհանուր գործին։

Ժամանակաւոր աջողութիւնների համար մենք չը պէտք է մոռանանք էական գաղափարը, սկզբունքը, և յօնքը շինելու տեղ աչքն էլ չը փչացնենք։

Այդ տեսակէտից մենք ստիպված ենք հասարակական լուրջ քննադատութեան առարկայ դարձնել անջատողական այն սկզբունքը, որ այժմ մտցնում է Դպրոցական Ֆոնդի մէջ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը և մասամբ նաև Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, երբ նրանք փորձեր են կատարում ուրոյն-ուրոյն դպրոցական ֆոնդեր ստեղծել։

Մենք միանգամայն գրուատում ենք թէ Խորհրդի և թէ առաջնորդի եռանդը՝ երբ նրանցից ամեն մինը աշխատում է անմիջապէս իրան յանձնված հաստատութեան կամ վարչութեան շահերի և բարգաւաճման համար։ Մենք գոհունակութեամբ կարող ենք յիշել այն փաստը, որ մեր ունեւոր դասակարգը նախաձեռնողն է մեր դպրոցների պահպանութեան և նուէրներ է տալիս Կ. Հ. Բ. Ընկ. այդ նպատակով։ Բայց մենք գտնում ենք սկզբունքային մի հարց և կարեւոր հարց. արդեօք դրանով չե՞նք ջլատում ընդհանուր հարցը, ընդհանուր դպրոցական, համազգային ֆոնդի գոյութիւնը։ Նպատակայարմա՞ր է միեւնոյն գործի համար ուրոյն-ուրոյն ֆոնդեր ստեղծել, թէ՞ ազգային դպրոցական ֆոնդը մի պէտք է լինի և ոչ բաժան-բաժան։

Հայոց ժողովրդական-ծխական դպրոցների տէրը և իրաւասուն ինքն հայ ժողովուրդն է ի դէմս ազգընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց, և մեր բոլոր դպրոցները իրաւագիտապէս և բարոյապէս ենթարկված են նրա անմիջական իրաւասութեան։ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը, որքան էլ ազգային, բայց վերջ ի վերջոյ մի մասնաւոր ընկերութիւն է, որի գոյութիւնը կախված է այս կամ այն նահանգապետի բարեացակամ վերաբերմունքից։ Վերջապէս, այդ ընկերութիւնը կարող է օգնել, նպաստել մեր ժողովրդական-ծխ. դպրոցներին միայն կողմնակի կերպով և ոչ անմիջապէս, քանի որ ուղղակի հսկողութիւն ունենալ իր կողմից նպաստ ստացող դպրոցների վրա չէ կարող։

Արդ, այն պահուն, երբ հրապարակի վրա է դրված ազգային դպրոցական ֆոնդի ուժեղացման խնդիրը, նպատակայարմա՞ր է վեր կենալ և աշխատել ջլատել այդ ուժեղացումը ուրոյն-ուրոյն ֆոնդերի ստեղծմամբ։ Կշռե՞լ ենք այդպիսի մի քայլի ապագայ բոլոր հետեւանքները։

Ահա ինչ կարեւոր հարցի վրա կամենում ենք հրաւիրել մեր հասարակութեան և բանիմաց ու գիտակից անձանց ու իրա՝ Կ. Հ. Բ. Ընկ. ուշադրութիւնը։

Սակայն կայ մի կարեւոր հանգամանք, որ պէտք է ի նկատի ունենալ։ Մեզ կարող են առարկել, որ ազգային դպրոցական ֆոնդի ղեկավարութիւնը և վարչութիւնը չէ կարելի թողնել բացառապէս էջմիածնին, որը անկարող է իրագործել այդպիսի մի մեծ գործ, մինչ Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. Խորհուրդը, իբրև ընտրական մարմին, որոշ երաշխիք է ներկայացնում։ Բայց մենք բնաւ չենք էլ ասում, որ ազգային դպրոցական ֆոնդի ղեկավարութիւնը թողնվի միայն էջմիածնին։ Ոչ. պէտք է հաստատել Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ մի յանձնաժողով, որի անդամները լինեն հայ ժողովրդի ընտրեալ ներկայացուցիչները, և այդ յանձնաժողովը վարէ ամբողջ գործը։

Դնելով առ այժմ խնդիրը քննութեան՝ սկզբունքային տեսակէտից, մենք նորից կը դառնանք նրան։

Հ. Սուքիասեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

Պետերբուրգ.—Մոնղոլական պատգամաւորութիւնը ընդունվեց արտաքին գործերի մինիստրից։

—

Պետերբուրգ.—Մոնգոլական պատգամաւորութիւնը արտաքին գործերի մինիստրին յայտնեց մեծ շնորհակալութիւն վերածնված Մոնգոլիայի անունից ռուսաց կառավարութեան բարեացակամ վերաբերմունքի համար։ Մինիստրը պատրաստակամութիւն յայտնեց ծառայութիւն մատուցանել Մոնգոլիային, խոստացաւ աջակցութիւն, յանձնեց Թագաւոր Կայսեր կողմից հրաւէր՝ այցելելու Լիվադիա։

Բուխարեստ.—Զինւորական մինիստրի մօտ կայացաւ խնճոյք, որին ներկայ էր ռուսաց զինւորական պատգամաւորութիւնը, ռուսաց միսսիայի պաշտօնեաները, աւստրիական զինւորական կցորդը, գեներալիտէտը։ Մինիստրը ճառի մէջ ասաց. «Պանծալի ռուսաց զօրքի օֆիցերները եկել են իրանց որդիական յարգանքը մատուցանելու զօրապետներից ամենանշանաւորին, որ զարդարեց ռուսական զինւորական պատմութեան էջերը, եկել են Ռումինիա ռուս պանծալի զօրքերով, որոնք անհամար կռիւ են մղել թիւրքերի դէմ։ Բաղդաւոր են այն երկիրները, որոնց պանթէօնում կան այնպիսի անուններ, ինչպէս Սուվորովի անունն է։ Աւելի բաղդաւոր են այն երկիրները, որոնց զաւակները կարողանում են յարգել իրանց նախորդներին»։ Վերջում մինիստրը ողջունեց ռումինական զօրքի անունից և բաժակը բարձրացրեց Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհու առողջութեան և պանծալի ռուսաց զօրքի համար։ Գեներալ Ռոմանենկօն շնորհակալութիւն յայտնեց հիւրասիրութեան համար, յիշեցրեց երկու զօրքերի եղբայրութեան մասին, խմեց Թագաւորական զոյգի և ռումինական զօրքի կենացը։

—

Կ. Պօլիս.—«Մ. և Ա.» կուսակցութիւնը եռանդով աշխատում է Թրակիան բնակեցնել Մակեդոնիայից գաղթած մահմեդականներով, աշխատելով ստեղծել Եւրոպական Թիւրքիայում մահմեդականների խիտ ազգաբնակութիւն։ Այդ նպատակով ձեռք են առնվում ամեն տեսակ միջոցներ, որպէս զի ստիպեն Թրակիայի քրիստոնեայ ազգաբնակութեանը հեռանալ իր օջախից։

Մեծ նշանակութիւն են տալիս «Մ. և Ա.» կոմիտէտի ազդեցիկ անդամ Կարասսօյի Հռոմ գնալուն, ուր ներկայումս բանակցութիւն է վարվում Թիւրքաց նաւատորմը ուժեղացնելու մասին։

—

Բեռլին.—Եկան ֆրանսիական ֆինանսական աշխարհի երկու ներկայացուցիչները, որոնք բանակցութիւն սկսեցին Սակսօնիայի գերմանական դրամատան հետ՝ Փոքր-Ասիայի երկաթուղիների մասին։ Բանակցութիւնները մօտ են իրանց վախճանին, որի առիթով էլ Ցիմմերմանը խորհրդակցում է ֆրանսիական դեսպան Կամբօնի հետ։ Բանակցութիւնները ընթանում են նպաստաւոր մաքով։ Պարզվում է, որ առաջիկայ անգլօ-թիւրքական, ռուս-թիւրքական և ֆրանս-թիւրքական կօնֆլիկտները կապված են իրար հետ և ոչ մի մրցումն պետութիւնների միջև Փոքր-Ասիայում երկաթուղիներ կառուցանելու հարցի նկատմամբ ապագայում չէ կարող լինել։

—

Սօֆիա.—Գեներալ Սավօվը հրատարակել է բաց նամակ, որի մէջ բացատրում է, որ Բօլգարիայի դժբաղդութիւնը արգասիք եղաւ ոչ միայն յունիսի 16-ի քայլի, այլև այդ թըւից առաջ տեղի ունեցած դէպքերի. այդ պատճառները պարզելու համար հարկաւոր էր մերկացնել շատ պետական գաղտնիքներ։ Սավօվը առաջարկում է հրաժարվել փոխադարձ մեղադրանքներից և աշխատել ազգի ոյժերը վերակենդանացնելու մասին. Բօլգարիայի աստղը դեռ չէ թեքվել, ազգային իդէալը չէ կարող մեռնել։

Հերքվում է այն տեղեկութիւնը, թէ իբր բօլգարական կառավարութիւնը խնդրել է սերբիական կառավարութեանը նշանակել աչքի ընկնող քաղաքական գործչի Սերբիայի կողմից Սօֆիայում՝ բարեկամական յարաբերութիւնները վերականգնելու համար։

—

Վիէննա.—Ունգարական պատգամաւորութեան արտաքին գործերի մասնաժողովը Բերխտօլդին երկար բացատրութիւններ տուեց։ Խօսելով Թիւրքիայի մասին, հռետորը մատնանշեց, որ բալկանեան ճգնաժամի ամբողջ ընթացքում Ռուսաստանի և Աւստրիայի յարաբերութիւնները մնացին կոռէկտ և բարեկամական։ Վատ չեն միապետութեան յարաբերութիւնները նաև Ֆրանսիայի հետ։ Աւստրիան լաւ տնտեսական յարաբերութիւններ է կապել Սերբիայի հետ։

—

Վիէննա.—Պատգամաւորութիւններին ներկայացվեց միապետութեան բիւջէն 1914 թ. առաջին կիսամեակի համար։ Սովորական զինւորական ծախսերը կազմում են 238,826,207 կրօն, 1913 թ. 43½ միլիոնով աւելի։ Արտաքին գործերի մինիստրութիւնը լրացուցիչ կերպով խնդրում է 4 միլիոն։ Ընդհանուր առմամբ զօրքի ծախքը հաշւված է 317 միլիոն, նաւատորմի ծախքը՝ 40 միլիոն։

Ֆրանց-Յօզէֆ կայսրի գահական ճառի առիթով պատգամաւորութիւնները ջերմ ովացիաներ արին։

Ընդդիմադիր ունգարական պատգամաւորները ներկայ չեղան Հօֆբուրգում ընդունելութեանը։ Ունգարական պատգամաւորութեան պալատի առաջ Բուդապեշտի մի անծանօթ նախկին մինիստր-նախագահ Լուկաչի վրա նետեց երկու փոքր ծրար, որոնցից մինի մէջ խաղաթղթեր, իսկ միւսի մէջ՝ աղ։ Դրանում տեսնում են այն երկու գործերը, որոնց պատճառով էլ հրաժարվեց Լուկաչը։

—

Վաշինգտօն.—Ապստամբութիւնը տարածվում է դէպի Մեկսիկայի հիւսիս, հարաւ-արեւելք։ Տամպիկոյի և Վիկտօրիայի միջև բոլոր նաւահանգիստները և երկաթուղիները կործանված են։

—

Աթէնք.—Սերբիական դեսպանը թագաւորին յանձնեց Կարագէօրգէէ շքադրամի նշանները և մեծ շքադրամ քաջութեան համար։ Թագաւորը գոհունակութիւն յայտնեց երկու պետութիւնների միութեան ապացոյցի առիթով։

ԿՕԿՕՎՑԵՎԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 նոյեմբերի

Պօտսդամ.—Ստատս-սեկրէտար Կօկօվցեվը ընդունվեց կայսրից։ Ընդունելութիւնից յետոյ կայսրը Կօկօվցեվին ներկայացրեց կայսրուհուն. նոյնին մեծութիւնների մօտ տեղի ունեցած նախաճաշին, բացի Կօկօվցեվից, ներկայ էին ռուսաց դեսպանը, կոմս Տատիշչեվը, Դաւիդօվը, կանցլեր Բէտման-Հօլվէգը, արտաքին գործերի մինիստրի օգնական Ցիմմէրմանը, գեներալ-շտաբի պետ Մօլտկօն։ Նախաճաշին ստատս-սեկրէտար Կօկօվցեվը նստել էր կայսրուհու ձախ կողմում, դեսպանը՝ կայսրի կողքին։

—

Բեռլին.—«Բերլինէր Տագէբլատի» գլխաւոր խմբագրի հետ խօսելիս՝ Կօկօվցեվը շօշափեց բացառապէս ներքին քաղաքականութիւնը։ «Խօսում են,—ասաց Կօկօվցեվը,—Ռուսաստանի ներքին քաղաքականութեան մասին. այլ սակայն ինչի՞ մէջ է կայանում այն. արդեօք ինչ են հասկանում այդ խօսքի տակ Դումայի պատգամաւորները և մամուլը։ Այդ կարող է ճիշդ լինել մեծ քաղաքների համար, բայց խոշոր կենտրոններից 100 կիլօմետր տարածութեամբ և նահանգական քաղաքներից 30 կիլօմետր հեռու արդէն ոչինչ չը գիտեն այդ քաղաքականութեան մասին։ Օր-աւուր աճող տնտեսական շահերը յետ են մղել զուտ քաղաքական շահերը։ Ռուսաստանի բարեկեցութիւնը չափազանց բարձրացել է. ոչ մի տեղ յեղափոխութեան ձգտում չը կայ, որի համար, ի դէպ է նկատել, ոչ մի հիմունք էլ գոյութիւն չունի։ Մեծ քաղաքական-օրէնսդրական ձեռներէցութիւնների համար Ռուսաստանը տակաւին պատրաստված չէ։ Ես ձգտում եմ լաւ կառավարութեան, որպիսին վարվէ արդարացիօրէն, որպէս զի ամեն մինը զգայ իրան պաշտպանված և տեսնի դէպի ինքը նպաստաւոր վերաբերմունք։ Այդօրինակ ընդարձակ պետութիւն կառավարելը անհամեմատ դժուար է, քան մի ուրիշ պետութիւն։ Ներկայի խնդիրն է ստեղծել լաւ վարչական գործիք, և ոչ թէ այսպէս կոչված քաղաքական օրէնքներ»։

«Բերլինէր-Տագէբլատը» իր յօդուածի խորագիրը դրել է՝ «Յեղափոխութիւն չէ նախատեսվում»։

Բեռլին.—Կոկովցեվը ընդունեց «Նէյէ Ֆրէյէ Պրէսսէի» թղթակցին։ Աւստրո-ռուսական յարաբերութիւնների առիթով տրրված հարցին Կոկովցեվը յայտնեց, որ կարող է կարծիք յայտնել որպէս մասնաւոր անձն, որովհետև ինքն երկար ժամանակ բացակայել է Ռուսաստանից։ Աւստրո-Ունգարիայի կողմից Սերբիային ներկայացված ուլտիմատումը նրա համար անսպասելի է եղել։ Սերբիան բալկանեան պատերազմի ժամանակ զիջող և կորեկտ է եղել. նոյնիսկ Ադրիատիկի նաւակայանի խնդրում, որն այնչափ մօտից շօշափում էր նրա շահերը, Սերբիան բաւականացաւ դէպի ծովն ունենալիք տնտեսական մերձեցմամբ, հետևաբար Աւստրո-Ունգարիան այժմ էլ իր բողոքով ընդդէմ Սերբիայի շարժման դէպի Ալբանիա՝ պիտի դիմէր միւս պետութիւններին, որովհետև Սերբիան հաւանօրէն կը հետևէր պետութիւնների հաւաքական դիմումին։ Աւստրո-ռուսական յարաբերութիւնների մէջ պիտի խուսափել ամէն կարգի ոչ պետանի գրգռումներից, որոնք կարող են առաջ բերել լարումն Ռուսաստանի կառավարչական շրջաններում և հասարակական կարծիքի։

Ռուս կառավարութիւնը լցված է անկեղծ ցանկութեամբ, որպէսզի նրա յարաբերութիւնները Աւստրո-Ունգարիայի հետ լինեն պարզ ու խաղաղ։

Բալկանեան պատերազմի ժամանակ ռուս պետական գործիչները անընդհատ աշխատում էին Աւստրիայի հետ բարի յարաբերութիւններ պահպանելու և ճգնաժամային մոմենտներին ապացուցեցին, որ նրանք համաձայն են հնարաւոր զիջումներ անելու։ Այժմ, պատերազմը վերջանալուց յետոյ, Ռուսաստանը և Աւստրո-Ունգարիան աւելի մօտ են իրար, քան էին պատերազմի սկզբում։ Կարևոր է, որպէսզի Աւստրո-Ունգարիայում, որի կառավարութիւնը լցված է միևնոյն մտադրութիւններով, խուսափեն այն ամէն անհաճելիութիւններից, որոնք կարող են ազդել փոխադարձ յարաբերութիւնների վրա։

Կոկովցեվը մատնանշելով այն դէպքի վրա, որ պատահել էր ռուս բժշկի հետ, որը գանգատվում էր Աւստրո-Ունգարիայի կողմից ցոյց տրված վատ վերաբերմունքից՝ Ռուսաստան վերադառնալիս, յայտնեց, որ բողոքների այդօրինակ առիթներից պիտի խուսափել, որովհետև նրանք արդարացիօրէն կարող են նպաստել Ռուսաստանի հասարակական կարծիքի գրգռման։

—

Բեռլին.—«Լօկալ Անցէյգէրի» ներկայացուցչի հետ ունեցած զրոյցի ժամանակ Կոկովցեվը շօշափեց ալբանական հարցը, յոյս յայտնելով որ այս դժուարին խնդիրը շուտով կը վերջանայ, բաւարարելով բոլորին։ Լօնդօնի որոշումների վերաքննութեան վերաբերմամբ երբէք լուրջ մտադրութիւն գոյութիւն չէ ունեցել. յամենայն դէպս Ռուսաստանը այդպիսի առաջարկ չէ արել։ Սակայն,—ասաց պետական քարտուղար Կոկովցեվը,—որչափ որ մեծ պետութիւնների համերաշխութիւնը ներկայացել և ներկայանում է այդ և նման հարցերի խաղաղ յարդարման բարեյաջող հիմունք, նոյնչափ նուազ բարեյաջող նախաձեռնութիւն կարելի է համարել, եթէ այս կամ այն մեծ պետութիւնը ցանկութիւն է արտայայտում դուրս գալ այս ընդհանուր ուղիից և իր վրա վստահելով՝ առաջ տանել բալկանեան քաղաքականութիւնը։

Այսօրինակ քաղաքականութիւնը ոչ միայն ցաւ չի առաջացնի, լինելով անհամամիտ Լօնդօնի որոշումների նպատակներին, այլ և նա վտանգաւոր է, ի նկատի առնելով որ նա կարող է տարուբերել պետութիւնների այնպիսի մեծ դժուարութիւններով առաջ բերած համակարծիքութիւնը. այդ պատճառով էլ Աւստրո-Ունգարիայի առաջ գալը, որին կուսակցեց Իտալիան, չի ունենայ Ռուսաստանի աբսոլիւտ համամտութիւնը։

Եւրոպան երկու տարուց աւելի է, ինչ տառապում է ներվային ճգնաժամերից, որոնք անսահման կերպով կարող են բարձրացնել գործնական աշխարհի ջղայնութիւնը և Եւրոպան վերածել քաղաքական խելագարների տան նման մի բանի։

Ի նկատի ունենալով այս՝ պէտք էր խուսափել առանձնակի հրապարակ գալուց։ Պարիզում պետական քարտուղար Կոկովցեվը աւստրո-ունգարական դեսպանի հետ զրուցելիս՝ մասնաւորապէս շօշափեց աւստրո-ռուսական յարաբերութիւնները։ Այս զրոյցը գուցէ հիմնաւորապէս նպաստէ երկու միապետութիւնների յարաբերութեանց պարզաբանմանը, որոնք Կոկովցեվի Ռուսաստանից հեռանալու մոմենտին աւելի շատ կողմերով լաւ էին, քան նախորդ տարիներում։ Ի վերջոյ Կոկովցեվը ցաւ յայտնեց, որ Գերմանիայում շատ կան անճիշդ տեղեկութիւններ Ռուսաստանի կեանքի մասին։ Կոկովցեվը յոյս է տածում, թէ վերջապէս անճիշդ ենթադրութիւններին կը յաջորդէ ռուսական հոգեբանութեան աւելի լաւ ուսումնասիրելը։

—

Բեռլին.—Ռուսաց դեսպանի ցանկութեան համաձայն՝ Կոկովցեվը ընդունեց այստեղի ռուսաց մամուլի ներկայացուցիչների խմբակցութիւնը ի դէմս՝ «Россія», «Гол. Москвы», «Рус. Вѣд.», «Ран. Утро», «Рѣчь», «Торг.-Промышл. Газета», «Пет. Агент.» և «Русск. Слово» թերթերի թղթակիցների։ Ողջոյնից յետոյ, որ արտասանեց ռուս գրողների Բեռլինում նոր կազմված ընկերութեան նախագահ՝ «Русск. Вѣд.»-ի թղթակից Գրօսմանը Կոկովցեվը յայտնեց իր ուրախութիւնը, որ տեսնում է օտար երկրում ռուս մամուլի ներկայացուցիչներին, աւելի ևս՝ որ ամեն տեղ ստիպված էր նուիրել շատ ժամանակ օտարազգի մամուլի ներկայացուցիչներին։

«Քննադատեցէք մեզ որքան կուզէք,—ասաց Կոկովցեվը,—բայց եղէք օբիէկտիվ և ճշգրիտ, գրեցէք իրական դէպքերը»։

Զրոյցի ժամանակ Կոկովցեվը տուեց Հռոմում, Պարիզում և Բեռլինում ունեցած իր բացատրութիւնների կատարեալ պատկերը ընթացիկ ամենակարևոր հարցերի վերաբերեալ, ընդգծելով որ արտասահմանում սխալ են հասկանում մեր մինիստրների խորհրդի նախագահի դրութիւնը՝ հաւասարեցնելով նրան եւրոպական առաջին մինիստրի դրութեան հետ, որը պատասխանատու է հանդիսանում ամբողջ կաբինէտի քաղաքականութեան համար։ Կոկովցեվը առանձնապէս մանրակրկիտ նկարագրեց բալկանեան խնդրի դրութիւնը, Ալբանիայի, Թիւրքա-յունական և հայկական խնդիրները, որոնց լուծումը հաստատեց իր այն օպտիմիստ կարծիքը, որ այդ հարցերի համար չէ կարող առաջ գալ եւրոպական կռիւ։

«Մեզ մեղադրում էին նրանում, որ մենք դաւաճանել ենք սլաւօնական իդէային. այնու ամենայնիւ անցքերը արդարացրին մեր ընթացքը։ Մենք վերջին աւստրօ-իտալական սպառնալիքի ժամանակ կանգնել էինք Սերբիայի կողմը, որովհետև Սերբիան ամբողջ ժամանակ ոչնչով առիթ չէր տուել այդ տեսակ միջամտութեան»։ Կոկովցեվը գոհունակութեամբ նկատեց եւրոպական պետութիւնների, մասնաւորապէս Գերմանիայի և Ռուսաստանի, հայեացքների միջև եղած համերաշխութիւնը հայկական բարենորոգումների հարցում։ Կոկովցեվի ասելով, գործի միսախն բացառապէս նիւթական էր. խնդիրը ոչ թէ պետական փոխառութեան մասին էր, որի մէջ ամենափոքր անգամ հարկ չը կայ, այլ բացառապէս Ռուսաստանում եղած մասնաւոր երկաթուղային շինարարութեան ծրագիրն իրագործելու համար միջոցներով ապահովելու մասին, որը անհրաժեշտ է երկրի տնտեսական զարգացման համար։ Միաժամանակ Կոկովցեվը յայտնեց, որ, իր կարծիքով, ամենից նպատակայարմար կը լինի երկաթուղային շինարարութեան գործը առաջ տանել, զուգորդել պետական շինարարութիւնը մասնաւոր կոնցեսսիաների հետ։ Մասնաւոր երկաթուղային շինարարութիւնը միջոցներով ապահովելու հարցի առիթով նա Պարիզում լիակատար սկզբունքային համաձայնութիւն է կայացրել Ֆրանսիայի հետ։ Ռուսաստանի ներքին վիճակի մասին Կոկովցեվը ասաց, որ Դումայի հետ ունեցած կոնֆլիկտի հարթումը տեղի է ունեցել իր բացակայութեան միջոցին և նա հնարաւորութիւն չունեցաւ նրան մասնակից լինել. բաւականութիւն յայտնեց կոնֆլիկտը վերջանալու առիթով, նկատելով՝ որ կառավարութեան և Դումայի միջեան գործունէութիւնը էական պայմանն է կազմում մեր օրէնսդրութեան կանոնաւոր զարգացման գործում։

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Երզրում, 20 հոկտ.

Մի շաբաթ է, որ մեր քաղաքում՝ Թիւրքահայերիս նորընտիր պատրիարք Զաւէն եպ. պատուաւոր հիւր է։ Նա բնակվում է առաջնորդարանում, որի դրանը ամեն գիշեր կատարվում են լուսավառութիւններ։ Այս մի շաբաթվայ ընթացքում սրբազան հիւրին այցելութիւն տուեցին հայ և օտար ժողովուրդների առաջաւոր բոլոր տարրերը։ Նա համեստ, բարեկամի վերաբերմունքով ընդունում է բոլորին, խօսակցում նրանց հետ ընկերաբար, տեղեկանում բոլորի կեանքի նոյնիսկ մանրամասնութիւնների հետ։

Ժամանումի առաջին օրը, երբ նրան ներկայացան ժողովրդի ներկայացուցիչներն ու պաշտօնական մարմինները, Երզրումի առաջնորդ Սմբատ եպիսկոպոսի բարի գալուստի ճառին նորընտիր պատրիարքը պատասխանեց հետևեալ խօսքերով.

«Ես ինքս գաւառացի եմ և վաղուց ի վեր նուիրված նրա ցաւերին ու կարիքներին. ես սիրել եմ գաւառը և գաւառի ժողովուրդը. ես պիտի լինեմ ոչ թէ Պօլսի, այլ գաւառի պատրիարքը. ես պիտի ապրեմ նրա հոգսերով ու կեանքով։

«Ուխտել եմ ծառայել ազգին շատ վաղուց, պաշտօնավարել եմ գաւառներում և աշխատել եմ լինել օգտակար։ Բայց թէ պիտի կարողանա՞մ օգտակար լինել ազգին որպէս պատրիարք, դա ապագան ցոյց կը տայ։

«Ես սահմանադրական պատրիարք եմ. ես պիտի գործեմ ժողովրդի ներկայացուցիչների հետ համերաշխ. և որպէս զի ես օգտակար լինեմ ազգին, անհրաժեշտ է որ հայ ազգի հասարակական գործիչները, պաշտօնական մարմինները աջակցեն ինձ և, որ գլխաւորն է, միաբան լինեն իրար մէջ։

«Որքան շատ նրանք համերաշխ լինեն, այնքան իմ գործունէութիւնը արդիւնաւէտ կը լինի։

«Դուք բարեմաղթեցիք ինձ լինել Մեծն Ներսէս. բայց, սիրելիներ, հրաշքի դարերը անցան գնացին. այժմ մենք ապրում ենք բէալ այժմի դարում։ Մեծն Ներսէս չենք կարող լինել, բայց նրա սկսած գործը պիտի աշխատենք առաջ տանել, մինչև հայ ժողովրդի սպասած յաղթանակի ապահովումը։

«Իմ դերը ես նմանեցնում եմ զօրավարի դերին. և որպէս զօրավար, ես պիտի կանգնեմ կռուի առաջին շարքերում. ես պիտի լինեմ ամենաառաջին պայքարողը. բայց իւրաքանչիւր անգամ որ յետ նայեմ, պէտք է ժողովուրդը իր ձայնով ինձ խրախուսի, պէտք է իմ զինուորները իմ ետևից գան. այն ժամանակ ես կը կռուեմ բուռն թափով, և վստահ եմ թէ յաղթանակը մեր ժողովրդեանը պիտի լինի, թէկուզ ես զոհվեմ էլ...»։

Նորընտիր պատրիարքի այս խօսքերը մեծ ազդեցութիւն են արել ժողովրդի վրա։ Ստեղծել են համակրանքի մի պսակ երիտասարդ պատրիարքի անուան շուրջը։

Հոկտ. 18-ին, ուրբաթ օր, նորընտիր պատրիարքը 1894 թ. կոտորածի զոհերի յիշատակին մատուցեց հանդիսաւոր պատարագ, որից յետոյ գերեզմանատանը, զոհերի ընդհանուր դամբարանի վրա կատարեց հոգեհանգիստ։ Ներկայ էր երկսեռ խուռն բազմութիւն, մի քանի հազարից բաղկացած։

Դաշնակցութեան կոմիտէն, օգտվելով առիթից, նոյն շաբաթվայ ընթացքում Կ. Պօլսում յանկարծակի մեռած Դաշնակցութեան գլխաւորներից Սիմէօն Զաւարեանի յիշատակին ևս յատկացրեց կատարած պատարագն ու հոգեհանգիստը։

Զգեստաւորված դպիրները «Ի վերին Երուսաղէմ» շարականից և «Հայր-մեր» աղօթքից յետոյ, Դաշնակցութեան հրահանգով երգեցին սօցիալիստ-յեղափոխականների յուղարկաւորութեան մարշը՝ «Դուք զոհ գնացիք կռուի մէջ»...

Դամբանականներ խօսեցին երկու դաշնակցական պարոններ Սիմէօն Զաւարեանի մասին։ Բողոքական հայ համայնքի ներկայացուցիչները ներկայ էին դպրոցական կազմով։ Նրանց կողմից խօսեց քարոզիչ Գրրգեաշարեանը։

Եկեղեցու մէջ նորընտիր պատրիարքը քարոզ խօսեց, կրթութեան և ուսման կարիքը շեշտեց, ու երբ խօսքը եկաւ երկրի անդորրութեան մասին, ասաց՝ որ իւրաքանչիւր անհատ ու ազգ իր ճակատագիրը պէտք է կապի իր բազկի ոյժի հետ, դրսից օգնութիւն սպասելը մեզ կը տանի դէպի յուսահատութիւն ու կորուստ. նախ մենք մեզ պէտք է օգնենք. աղօթքով փրկութիւն սպասելու դարը այլ ևս մեր սեփականութիւնը չէ։

Այս մի շաբաթվայ ընթացքում տրվեցին բազմաթիւ պաշտօնական հացկերոյթներ, ի պատիւ Զաւէն սրբազանի, վալի Ռէշադ-բէյի, ռուսական հիւպատոսի, հայ ուսուցիչների ու անհատների և ուրիշների կողմից։

Առաջնորդարանն իր հերթին առանձին-առանձին հրաւէրի սեղաններ տուեց նահանգապետ-վալիին՝ քաղաքային և զինուորական բարձրաստիճան պաշտօնեաների հետ, օտար հիւպատոսներին, քաղաքի հագոր ներկայացուցիչներին, եւրոպացի հիւրերին և օտար հիւպատոսարանների թարգմաններին. այս երեկոյ տրվեց պաշտօնական ընթրիք ազգ. պաշտօնական մարմիններին և միութիւնների ու արհեստաւորների ներկայացուցիչներին՝ թւով մօտ 150։

Բոլոր սեղանների վրա էլ եղան պաշտօնական բաժակաճառեր արտասանութիւններ սովորական բառերով ու բարեմաղթութիւններով։

Առանձնապէս նկատելի է, որ բողոքական հայ համայնքը շատ մօտիկ յարաբերութիւններ է պահպանում ազգի մեծ հատուածի հետ. այլ ևս չը կայ հին անմիտ խտրականութեան ոգին. բացարձակապէս յայտարարում են՝ «Ազգով մէկ ենք...»։

Վաղը մեր պատուաւոր հիւր նորընտիր պատրիարքը կը մեկնի Տրապիզոն՝ Բաբերդի ճանապարհով։ Կ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Բեռլին.—Խօսելով արտաքին քաղաքականութեան մասին, Կոկովցեվը մատնանշեց, թէ անհրաժեշտ է դրդել Թիւրքիային ընդունելու հայկական բարենորոգումների նախագիծը։ Կանցլերի հետ խօսելիս աջողվեց որոշել յամենայն դէպս հայեացքների սկզբունքային միութիւն։ (Հ. Գ.)

Կ. Պօլսից հեռագրում են. «Դաշնակցութիւն» կուսակցութեան համագումարին միաձայն վճռվեց խզել կապը «Մ. և Ա.» կոմիտէի հետ, ի նկատի ունենալով, որ երիտասարդթիւրքերը, հակառակ իրանց խոստման, չապահովեցին առանձին ազգութիւնների իրաւունքները։ Վճռված է փորձել համաձայնութիւն կապելու քիւրդերի հետ փոխադարձ աջակցութեան համար»։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՖԱՈՒՍՏԸ» ՀԱՅ ԲԵՄԻ ՎՐԱ

—

Անկասկած գեղեցիկ միտք է բեմական ռամպայի լուսով պարզաբանել համաշխարհային գրականութեան նշանաւոր արտադրութիւնները։

Աւելի գեղեցիկ է այդ միտքը ներկայ ժամանակում, երբ ոչ միայն հանճարներն են չքացել, այլ և խոշոր տաղանդների պակասութիւնն է զգացվում, երբ մանաւանդ ապարդիւն «որոնումների» ախտն է վարակել ամենուրեք մտաւոր միջակութիւնները։

Գեօթէն, հարկաւ, Շէքսպիր չէ իր հանճարի մեծութեամբ, և նրանք, որոնք սիրում են նրա անունը դնել գեղարուեստական գրականութեան արքայի անուան քով, անգիտակցաբար ընդգծում են նրա փոքրութիւնը, վասնզի մեծը մեծագոյնի մօտ միշտ փոքր է։

Ասում են՝ «Ֆաուստը» Գեօթէի գլուխ գործոցն է։ Ասում են՝ նրա մէջ են ամփոփված XVIII դարի գերման մեծ բանաստեղծի ամբողջ աշխարհահայեացքը, գիտութիւնը, փիլիսոփայութիւնը և գեղարուեստական ըմբռնողութիւնը։ Արդարև, Օսիանի, Հոմերոսի և Շէքսպիրի ազդեցութեամբ գրված այդ երկը առանձնակի տեղ է բռնում Գեօթէի գործերի մէջ, որոնցից մեծագոյնները սակայն թերի են մնացել։ Նա այնքան է տարբերվում իր նախկին գործերից, որ երբեմն տատանվում ես ընդունել, թէ դա «Վերտերի» հեղինակի գրչի արդիւնքն է։ Այն Վերտերի», որ այնքան սրտեր է յուզել, այնպիսի յեղաշրջում առաջացրել իր ժամանակակից գերման գրականութեան մէջ և որ, ի դէպս ասած, գրված է ֆրանսիական լաւագոյն գրականութեան ազդեցութեանտակ։

Տարբերվում է սակայն ոչ այնքան իր գեղարուեստական արժէքով, որքան իր ներքին իմաստով։

Ընդունված է մեծ մտքերի ստեղծագործութիւնները փառաբանել առանց վերապահումների։ Դա արդէն հանճարների երջանիկ արտօնութիւնն է, և մեզ՝ հասարակ մահկանացուներիս մնում է միայն մեր սովորական տուրքը տալ կեղծաւոր սնոբիզմին։ Բայց կայ մի ներքին դատաւոր, որ մենութեան մէջ մեզ թելադրում է անկեղծութիւն և մի փոքր էլ յանդգնութիւն։ Դա մեր սիրտն է, որ յաճախ իր բնական իրաւունքներով բռնանում է մեզ վրա։ Հետևաբար թող ներվի ինձ խոստովանել, որ ես Գեօթէի «Ֆաուստի» մէջ երբէք չեմ գտել և այժմ մանաւանդ չեմ գտնում այն, ինչ որ գտնում են նրա երկրպագուները։ Աւելի ճիշդ կը լինէր ասել՝ «չեմ զգում»։ Իսկ մի բան, որ չես զգում, յանցանք է ասել, թէ զգում ես։

Հայերէն ներկայացման առիթով ես մի անգամ ևս կարդացի այդ երկը։ Այս անգամ ես բարւոք համարեցի ընտրել Վէյնբերգի ռուսերէն արձակ թարգմանութիւնը։ Ընտրեցի արձակը, որովհետև յանգաւորը կարդացել էի վաղուց և մի քանի անգամ, և, բացի այդ, ինձ համար առելի է առ հասարակ ամեն մի յանգաւոր թարգմանութիւն, բացի մեծ բանաստեղծների ձեռքով կատարվածներից։ Իսկ այդպիսի թարգմանիչներ քիչ կան։

Կարդացի «Ֆաուստը» նորից ուշադիր, երբեմն կրկնելով մօնօլօգները, և նա ինձ չը յուզեց։ Գոնէ այնչափ, որչափ յուզել է ոչ միայն Շէքսպիրի, այլև նրա փոքրաւորի՝ Շիլլերի իւրաքանչիւր երկը, նոյնիսկ Բոյլերը։

Կայ ինչ-որ ոլիմպիական սառնութիւն Գեօթէի այն գործերի մէջ, որոնք գրված են ֆրանսիական գրականութեան ազդեցութիւնից հեռացած ժամանակամիջոցում։

Կարծես, նրա մէջ մրցում է բանաստեղծը մինիստրի հետ, փիլիսոփան գեղարուեստագէտի հետ և գիտնականը սնահաւատի հետ։ Մանր և շատ ճապաղ է արտայայտում իր մտքերը Գեօթէն «Ֆաուստի» մէջ։ Նա երբեմն մի ամբողջ մօնօլօգի մէջ չէ ասում այն, ինչ որ Շէքսպիրը կասէր երկու բառով։ Մի տեղ նա կենդանաբան է, միւս տեղ բուսաբան, մի այլ տեղ Հէլլէն և Գերման միֆօլօգիաների ուսումնասիրող։ Այստեղ նա գրեթէ բանակռիւ է մղում իր ժամանակակից հեղինակների հետ, այնտեղ նա այլաբանօրէն ծաղրածում է բանաստեղծներին և քննադատներին։

Տեսարաններ կան «Ֆաուստի» մէջ, որոնք ոչ մի կապ չունեն երկի բովանդակութեան հետ, օրինակ Վալպուրգեան գիշերը, բոյսերի և կենդանիների երևան գալը և երկար խօսակցութիւնները, Թագաւորի և իր մինիստրների երկար դատողութիւնները և այլն։ Կարծես Գեօթէն կամեցել է մի երկի մէջ ասել բոլորը, ինչ որ գիտէ, սովորել է և ուսումնասիրել։

Եւ այդ բոլորը, միմեանց խառնվելով, միմեանց հրելով, ներկայացնում են մի տեսակ քաօս, թէև հանճարեղ քաօս։ Ժամանակակից ընթերցողը մեծ համբերութիւն պիտի ունենայ ամբողջ երկը ծայրէ ի ծայր կարդալու առանց բացերի։

Ասում են՝ Ֆաուստը ինքը Գեօթէն է։ Ամեն ինչ սովորելուց և ուսումնասիրելուց յետոյ եկել է այն սօկրատեան եզրակացութեան, որ ոչինչ չը գիտէ։ Զզվելով, որ իր ամբողջ կեանքը անց է կացրել գրքերի փոշու մէջ, փափագում է վայելել նոր կեանք, լի հաճոյքներով ու զուարճութիւններով։ Եւ դրա համար իր հոգին վաճառում է դևին։

Եթէ այդպէս է, ինձ համար ինքը Գեօթէն դառնում է վերին աստիճանի ձանձրալի մի մարդ իր անվերջ գանգատներով, որովհետև «Ֆաուստի» առաջին մասի գրեթէ ամբողջ առաջին կէսը ուրիշ ոչինչ է՝ եթէ ոչ պառաւական անվերջ տրտունջ։ Միևնոյն միտքը կրկնվում է տասն անգամ, միատեսակ, ձանձրալի՝ քնաբեր լինելու աստիճան։

Ինձ թւում է, որ «Ֆաուստն» այդքան ժողովրդականութիւն չէր վայելի, եթէ չը լինէր մի ֆրանսիացի։ Սրանից աւելի քան կէս դար առաջ Շարլ Ֆրանսուա Գունօն նրան վերածեց օպերայի։ Այդ ժամանակից անա «Ֆաուստը» սկսեց հռչակվել երաժշտութեան շնորհիւ։ Հարկաւոր էր մի ֆրանսիացու «թեթևամտութիւնը», որպէսզի մեծ հասարակութեանը մատչելի դառնար մի գերմանացու «ծանրամտութիւնը»։

Համարձակ, նոյն իսկ յանդուգն է փափագը մի անձի, թէկուզ նա լինի այժմեան ռեժիսեօրների իդէալ Ռէյնգարդը, բեմին յարմարեցնել «Ֆաուստը» իբրև ողբերգութիւն։ Յանդուգն ոչ միայն այն պատճառով, որ յարմարեցնողից պահանջվում է մեծ տաղանդ և հմտութիւն, այլ և այն պատճառով, որ ինքը «Ֆաուստը» բեմի համար պիտանի գրուածք չէ։ Որքան կրճատէք, որքան յարդարէք ու զարդարէք նրան երգերով, պարերով, շլացուցիչ դեկորացիոնով՝ նա ձանձրալի է և կը մնայ ձանձրալի։ Արդարանալ նրանով, որ «Ֆաուստը» մի խորը փիլիսոփայական երկ է, չէ կարելի, որովհետև նրա անհասկանալի տեղերը վաղուց են պարզաբանվել բազմաթիւ քննադատների ձեռքով։ Հարկաւոր է միայն քիչ թէ շատ ծանօթանալ «Ֆաուստի» մասին գրուածներին և կարդալ բոլոր թարգմանութիւնների տակ եղած ծանօթութիւնները։ Ռուսերէն կարդացողի համար բաւական են նոյն իսկ Վէյնբերգի ծանօթութիւնները։

Սովորաբար ներկայացվում է «Ֆաուստի» միայն առաջին մասը ինչպէս օպերայում, նոյնպէս և ողբերգութեան մէջ. և դա միակ բանն է, որի համար պիտի շնորհակալ լինել նրան բեմին յարմարեցնողներից։

Ես դէմ չեմ դերասան-ռեժիսեօր Սևումեանի ցանկութեանը՝ անպատճառ ընդօրինակել իր Մոսկվայում տեսածները հայ բեմի վրա, պայմանով որ ընդօրինակումը շատ էլ խորթ չը լինի մեզ համար։ Դէմ չեմ, որ նա հետևել է Մոսկվայի ռեժիսեօր Կօմիսարժևսկուն, որ տուել է «Ֆաուստն» ինչպէս պիէս Նեզլօբինի ոչ այնքան էլ օրինակելի թատրոնում, իր կողմից հետևելով Ռէյնգարդին։ Բայց այն, ինչ որ ես տեսայ երկուշաբթի օրը Արտիստական թատրոնում, միապաղաղ ձանձրոյթ էր։ Եւ դրա պատճառը երկի իբրև թէ անաջող կրճատումը չէր, ոչ, ընդհակառակը, չեմ կարծում, որ կարելի լինի աւելի լաւ կրճատել նրան։ Պատճառը նաև պ. Սևումեանը չէ, որ «Ֆաուստը» թարգմանել է ռուսական կրճատումից, և ոչ մանաւանդ դերասանները, որ ոչ մի ջանք չէին խնայել պ. Սևումեանի բարեխիղճ և երկարատև աշխատութիւնն արդարացնելու համար։ Պատճառը ինքը «Ֆաուստն» է իբրև ողբերգութիւն։

Թատրոնական բեմը փիլիսոփայական տրակտատների ամբիոն չէ, այլ միայն և միմիայն արուեստի տաճար։ Իսկ ոչ մի արուեստ չի կարող լինել հաճելի, եթէ չի լսվում կամ չի տեսնվում առանց ձանձրոյթի։ Ես միանգամայն հասկանում եմ հասարակութեան տրամադրութիւնը, որ այդ գիշեր ձանձրոյթից յօրանջում էր և որի մի մասը մի քանի պատկերներից յետոյ հեռացաւ թատրոնից։ Նա պիտի յօրանջէր միշտ, եթէ «Ֆաուստի» մէջ ոչ մի անհասկանալի կէտ անգամ չը մնար նրա համար։ Պիտի յօրանջէ, որովհետև «Ֆաուստը» միմիայն կարդալ կարելի է, այն էլ մեծ զոհաբերութեամբ, և ոչ տեսնել բեմի վրա։

Ես գիտեմ, որ սնոբիստները պիտի մեղադրեն ինձ տգիտութեան մէջ. բայց թոյլ եմ տալիս ինձ նրանց չը հաւատալու, թէ իրանց հոգու խորքում ևս համաձայն չեն ինձ հետ, որ «Ֆաուստը» ձանձրալի է մեզ՝ ժամանակակիցներիս համար։ Մեր ներվային դարում ո՞վ ունի համբերութիւն մէկ ու քառորդ դար սրանից առաջ գրված մի փիլիսոփայական տրակտատ իբրև գեղարուեստական երկ կարդալու, մանաւանդ երբ փիլիսոփայութիւններն այնքան փոփոխվել են, գիտութիւններն այնքան առաջադիմել և ճաշակներն այնքան նրբացել։

Եթէ Շէքսպիրը չէ հնանում, նրա պատճառը նրա երկերի փիլիսոփայութիւնը չէ, այլ կեանքը, որ եռում է նրանց մէջ։ «Ֆաուստի» մէջ դատողութիւնները գերակշռում են կեանքը, ուստի և անմարսելի դարձնում երկը։

Մի քանի թեթև դիտողութիւններ «Ֆաուստի» հայերէն ներկայացման մասին։ Ընդհանուր առմամբ ռեժիսեօր Սևումեանի ջանքերը պիտի աջողված համարել։ Այդ երեկոյ նա ցոյց տուեց, որ շնորհալի ռեժիսեօր է, մի բան՝ որի մասին ես երբէք չեմ կասկածել։ Նա արել է բոլորը, ինչ որ կարելի էր անել աչքի առաջ ունենալով Արտիստական թատրոնի այժմեան աղքա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Нов. Вр.» թերթի մէջ կարդում ենք.

«Պօղոս փաշա Նուպարը, Եգիպտոսի հռչակաւոր մինիստրի որդին և նախագահը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից կարգված պատգամաւորութեան, որի նպատակն է միջնորդութիւն յարուցանել մեծ պետութիւնների առաջ Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածը իրագործելու համար, լիազօրել է Պարիզի մեր թղթակցին յայտնել ռուս ընթերցողներին, թէ հայերը խորապէս երախտապարտ են Ռուսաստանին Հայաստանի մէջ ռեֆօրմներ մտցնելու նախաձեռնութեան համար։ Ռուսական ծրագիրը կատարել է հայերի բոլոր ցանկութիւնները, բայց սաստիկ ընդդիմադրութեան հանդիպեց մանաւանդ Գերմանիայում, ուստի և պէտք եղաւ մտցնել մի քանի փոփոխութիւններ։ Հայերը տեսնում են ռուսական պրոեկտի մէջ իրանց իղձերը, բայց չեն կարող չը խոստովանել, որ Ռուսաստանի և Գերմանիայի բանակցութիւնների արդիւնք եղած ծրագիրը նոյնպէս կը ներկայացնէ մեծ բարւոքումն իրանց դրութեան։ Այդ ծրագիրը ընդունված է բոլոր մեծ պետութիւնների կողմից և կարելի է յոյս դնել նրա շուտափոյթ գործադրութեան վրա։ Բ. Դուռը, ի հարկէ, դիմեց իր սովորական միջոցին, մշակելով իր սեփական ռեֆօրմների ծրագիրը բոլոր նահանգների համար, բայց այդ ծրագրի գործադրութիւնը կը պահանջէ ահագին միջոցներ և շատ փորձառու պաշտօնեաներ, մինչ ոչ այդ միջոցները, ոչ էլ փորձառու պաշտօնեաներ Բ. Դուռը չունի իր տրամադրութեան ներքոյ։ Ռեֆօրմների ներմուծումը առաջ հիւսիսարևելեան Անատոլիայի մի քանի վիլայէթներում շահաւէտ կը լինի իրա՝ Բ. Դրան համար, որովհետև այդ վիլայէթները՝ աշխատասէր քրիստոնեայ ազգաբնակութեամբ՝ կը սկսեն արագօրէն բարգաւաճել և դա կը ստիպէ Բ. Դրան մտցնել ռեֆօրմներ և մնացած Թիւրքիայում։

«Բոլոր մեծ պետութիւնները ընդունել են Հայաստանի ռեֆօրմների ծրագիրը վերջնական ձևով, որ ապացոյց է թէ լիակատար համաձայնութիւն կայ Բ. Դրան վերաբերմամբ։

«Պօղոս փաշան նորերս վերադարձաւ իր կատարած ուղևորութիւնից՝ Բեռլին, ուր համոզվեց գերմանական կառավարութեան ցանկութեան անկեղծութեան մասին հայկական վիլայէթներում ռեֆօրմներ մտցնելու վերաբերմամբ։ Գերմանիայի տրամադրութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը առաջ եկաւ Սազօնովի Բեռլին այցելելուց յետոյ, որ յայտնեց, թէ Ռուսաստանը չէ կամենում գրաւել հայկական նահանգները, ինչպէս և հայերի կողմից եղած հաւաստիացումներից յետոյ, թէ նրանք հետամուտ չեն անջատվել Թիւրքիայից և չեն կամենում մտնել Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ։ Պօղոս փաշան ընդունվեց Կոկօվցեվի կողմից և ստացաւ այն տպաւորութիւնը, թէ Ռուսաստանը համակրում է ռեֆօրմներին։ Առ հասարակ հայերը լցված են յոյսերով ապագայի մասին»։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆԸ

ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

(Համազգային յոբելեանի առիթով)

Թիւրքահայոց ազգ. ժողովը Կ. Պոլսում՝ հոկտ. 11-ին, ուրբաթ, մի պատմական և նշանաւոր նիստ է կայացրել. պատմական և նշանաւոր նրանով, որ նա այդ օրը պաշտօնապէս հռչակել է այլադաւան հայերի միութիւնը—յարգելով նրանց խղճի ազատութիւնը—մայր հատուածի հետ՝ բոլոր այն կրթական, բարեգործական, հանրային ու ազգային գործերում, որոնք կազմում են հայ աշխարհիկ կեանքը։

Ազգ. ժողովի այդ օրվայ նիստին, որ տեղի է ունեցել Կում-Կափուի Մայր-եկեղեցում նախագահութեամբ պատր. տեղապահ Գ. եպ. Ճէվահիրճեանի և ատենապետութեամբ դոկտ. Ն. Տաղաւարեանի, ժողովականների թիւը հասել է 71 հոգու։

Ժողովի բացումից յետոյ՝ ժողովականները յոտնկայս ունկնդրել են Վեհ. Հայրապետի կոնդակը, որով հրամայվում էր հայ գրերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանները տօնել մեծ շքեղութեամբ։ Վեհը իր այդ կոնդակում ի միջի այլոց յորդորում է թիւրքահայերին իրանց ուշադրութիւնը կենտրոնացնել ազգային կրթութեան և դաստիարակութեան վրա՝ բանալով գիւղերում ուսումնարաններ՝ գիւղատնտեսական բաժիններով։ Այդ նպատակին հասնելու համար՝ նա գտնում է, որ անհրաժեշտ է դպրոցական ֆոնդի հանգանակութեան ձեռնարկել Թիւրքահայութեան շրջանում—ինչպէս այդ տեղի է ունեցել ռուսահայերի մօտ—որպիսի ֆոնդի կազմակերպութեան գործն և հէնց ինքը ֆոնդը՝ Վեհափառը նպատակայարմար է գտնում ազգ. ժողովի իրաւասութեան և տնօրինութեան ներքոյ տեսնել։

Ապա դոկտ. Տաղաւարեանը կարդացել է իր ընդարձակ մի ուսումնասիրութիւնը հայ գրերի գիւտի և տպագրութեան մասին։ Ըստ այդ ուսումնասիրութեան՝ բուն հայկական տառերի գիւտից, այսինքն սրանից 2800 տարի առաջ՝ հայերը ունեցել են ազգային ինքնուրոյն գիր, սեպաձև գրեր, թւով 120 հատ։ Այդ գրերը գործ են ածվել մօտ երկու դար։ Ապա փիւնիկեան տառերով արձանագրութիւններ են գտնվել, ինչպէս՝ օրինակ՝ «Տէրիբազ իշխան արևմտեան հայոց», ինչպէս վկայում է մակեդոն-սելևկեան շրջանի Փելիստրոս յոյն պատմագիրը։ Դանիէլեան տառերը փիւնիկեան տառեր էին, որոնց վրայից, ինչպէս և հարևան ազգերից փոխ առնելով՝ ս. Մեսրոպ կազմել է մեր այբուբենը։

Ապա կարդացվել է դոկտ. Վ. Թորգոմեանի մի առաջարկը, յանուն ազգ. ժողովի շնորհակալական հեռագրեր ուղարկել եւրոպական այն պետութիւնների լուսաւորութեան մինիստրներին, որոնք իրանց համալսարաններում մտցրել են հայոց լեզուի դասաւանդութիւնը. նոյնպէս շնորհակալութիւն յայտնել այն օտար գիտնականներին, որոնք հայ լեզուի դասաւանդութեամբ, ուսումնասիրութեամբ և հետազօտութեամբ են զբաղվում։ Այս առաջարկը ընդունվել է։

Ապա կարդացվել է Մաղաքիա արքեպ. Օրմանեանի հետևեալ հեռագիրը.

«Անձամբ ակար, սրտով խանդուն, մարմնով բացակայ, հոգւով միացեալ, կը ձայնակցիմ տօնական ժողովոյդ և կը փառաբանեմ գերանեալ յիշատակ Սահակայ և Մեսրոպայ գտողաց հայ տառին և գարդեանս Յակոբայ և Աբգարու առաջին տպագրողաց»։

Դրանից յետոյ՝ խանդավառ ծափահարութիւնների ընկերակցութեամբ կարդացվել է 22 երեսփոխանների կողմից ստորագրված հետևեալ գրութիւնը.

«Պատմութեան դառն անցքերուն հետևանքով հայ ժողովուրդը, դժբաղդաբար, ոչ միայն ենթարկուած է քաղաքական, այլև դաւանական բաժանումներու, ինչ որ ծանրապէս ազդած է մեր ազգի քաղաքակրթական և պատմական ճակատագրին վրայ։ Արդ, ներքոյ ստորագրեալ երեսփոխաններս, համոզուած ըլլալով թէ հասած է ժամանակը այլևս, ուր հայութեան բոլոր դաւանական հատուածները գէթ պէտք է ձգտին ազգային միակ և բարձրագոյն իդէալին,— կրթական, բարեգործական ու ազգային քաղաքակրթական համագործակցութեան.

«Համոզուած նոյնպէս թէ՝ հասունցած է այն գաղափարը, որով ազգին դաւանական բոլոր հատուածները պահելով հանդերձ իրենց կրօնական-վարչական ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը՝ կարող են գործակցիլ ազգային, կրթական և բարեգործական բոլոր խնդիրներու մէջ.

«Կառաջարկենք ազգ. ժողովին, որ իբրև նուէր այս օրուան ազգային մեծ տօնին և իբրև նուիրագործում հայ ժողովուրդի՝ մտաւոր ու հոգեկան 1500-ամեայ գործունէութեան, հանդիսաւորապէս յայտարարէ հետևեալ սկզբունքը.

«Ազգ. ժողովը յայտարարելով որ իւրաքանչիւր ամեն հայ քաղաքացի, առանց կրօնական խտրութեան, կրնայ լիապէս օգտուիլ ազգային սահմանադրութեան իրաւունքներէն, պահպանելով հանդերձ իր խղճի կատարեալ ազատութիւնը՝ ըստ իր դաւանութեան.

«Կոչ կուղղէ հայ ազգի բոլոր յարանուանութիւններուն՝ որ ընդունելով օրուան ազգ. այս մեծ տօնը որպէս խորհրդանշան դէպի համազգային միութիւնը առաջնորդող նուիրական գաղափարին, փութան համախմբուիլ սահմանադրութեամբ նուիրագործուած մեր ներքին ինքնավարութեան շուրջ՝ միացեալ ուժերով բեղմնաւորելու համար այն պատմական դերը, որուն սահմանուած է հայ ժողովուրդը իր քաղաքակրթական կոչումին մէջ։

«Վստահ ըլլալով որ մեր այս առաջարկը համաձայն է ազգ. ժողովի զգացումներուն՝ կը փափաքինք միաձայնութեամբ նուիրագործուած տեսնել զայն այս հանդիսաւոր նիստին մէջ»։

Ժողովը՝ միաձայն՝ իր հաւանութիւնն է յայտնել արտայայտված մտքերին։

Յիշեալ գրութեան ընթերցումից յետոյ կարդացվել է և հետևեալը՝ նոյնպէս բուռն ծափահարութիւնների և ցոյցերի ընկերակցութեամբ՝ ստորագրված բազմաթիւ երեսփոխանների կողմից.

«Հայ ազգին դաւանական բոլոր հատուածները ազգային կուլտուրական ինքնավար կեանքի մէջ համազգային միութիւնը կերտելու մասին այս վայրկեանին իսկ ազգ. ժողովին կողմէ արտայայտուած զգացումով և հռչակուած սկզբունքով տոգորուած, և համոզուած՝ որ այդ զգացումը և սկզբունքը այսօր ի պաշտօնէ ի լուր աշխարհի հռչակուելէ շատ առաջ, արդէն տիրապետող ձգտումն ու իղձը եղած էին անոնք Թիւրքահայ ներկայացուցչական ժողովին, երբ Թարգմանը իր պատմական և քաղաքակրթական կոչումին ու դերին գիտակ հայ ժողովրդին.

«Ստորագրեալքս նախաձեռնութիւնը ունեցանք անձնապէս բանակցութեան մտնելու հայ ազգի աւետարանական յարանուանութեան պատկանող հատուածին պոլսաբնակ աչքառու և հեղինակաւոր անձնաւորութիւններուն հետ։ Այդ բանակցութեանց նպատակն էր պատրաստել հիմերը համաձայնութեան մը, որ, ծնած ըլլալով հայ ազգին մէջ տիրապետող ձգտումէն, ընդ առաջ պիտի երթար ազգ. ժողովին կողմէ այսօր հռչակուած գեղեցիկ ցանկութեան և սիրահրաւէր կոչին։

«Մենք մեզ երջանիկ կը զգանք յայտարարելով թէ՝ բաղձացուած այդ համաձայնութիւնը գոյացաւ ոչ թէ դժուարութեամբ, այլ աւետարանական յարանուանութեան պատկանող յարգելի ազգայինները նոյնքան պատրաստակամ գտանք՝ ազգ. ժողովին արտայայտած համազգային միութեան բաղձանքին հանդէպ, որքան մենք զմեզ։ Դժուար է մեզ համար այս քանի մը տողերուն մէջ խտացնելով բացատրել այն տպաւորութիւնը և այն խանդավառութիւնը, զոր մենք, ստորագրեալներս, զգացինք, երբ անոնք, մեր առաջարկին ի պատասխան, յայտարարեցին թէ՝ Սիմէօն Ծերունիի պէս այս երջանիկ օրուան կը սպասէին։

«Երբեք չենք տարակուսիր, որ ազգային երեսփոխանութիւնը պիտի զգայ այդ անկեղծ բացատրութեան մէջ արտայայտուող բուռն տենչանքին գուրգուրալից խորութիւնը։

«Գոյացած համաձայնութիւնը բանաձևուած և երկուստեք ստորագրուած ըլլալով, մէկ օրինակը ներփակ կը մատուցանենք այս պատկառելի ժողովին, խնդրելով որ միաձայն հաւանութիւնով ընդունուի և վաւերացուի։

«Համաձայնութեան հիմը ճիշդ ու ճիշդ այն սկզբունքն է, զոր ազգ. ժողովը հռչակեց այսօր։ Սկզբունքը այս հանդիսաւոր առիթով նուիրագործելէ յետոյ, գործնական պայմանները, անոր կիրառումին սկսուած պահուն, կը մշակուին վարչական և պաշտօնական մարմիններու կողմէ և ազգ. ժողովին վաւերացումին կենթարկուին բնականաբար։

«Բազմատեսակ ցաւալի պատճառներ թոյլ չտուին դժբաղդաբար, որ ազգ. ժողովը կանուխէն պատրաստուէր՝ ազգային անզուգական այս կրկնակ տօնը իրեն արժանավայել ընծայաբերումով մը յաւերժացնելու գործին։

«Սակայն կը կարծենք, թէ համազգային միութեան այս առաջին քայլը և անոր նուիրագործումը՝ մեծ յոբելեանին և անոր մարմնացուցած գաղափարին հանդէպ այնպիսի մեծ նուէր մըն է, որ կը գերազանցէ նիւթական բոլոր ընծաները և կը խայտացնէ մեր Թարգմանիչներուն, մեր մտքի ազատագրումին ախոյեաններուն՝ Սահակներուն և Մեսրոպներուն անմահ հոգիները»։

Ապա կարդացվել է հետևեալ համաձայնագիրը, որ ստորագրել են մի կողմից հայբողոքականների երևելիները, իսկ միւս կողմից ազգային մի խումբ երեսփոխաններ.

«Նկատելով թէ ժամանակը հասած և երկուստեք փափաքը արտայայտուած է, որ ազգ. գործերու մէջ ազգին տարբեր հատուածներուն պատկանող անհատներ գործակցին նոյն իրաւունքներով և նոյն պարտականութիւններով.

«Երկուստեք հասկցուած և ընդունուած ըլլալով թէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին և հայոց պատրիարքարանը, ինչպէս նաև Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին և բողոքականաց ազգապետարանը իրենց ուրոյն գոյութիւնը պիտի շարունակեն ըստ առաջնոյն.

«Հետևաբար ներքոյ ստորագրեալք յետ խորհրդակցութեան և կարծեաց փոխանակութեան՝ որոշեցին առաջարկել և յանձնարարել երկուստեք իրենց պատկանեալ իշխանութեանց՝ ընդունիլ և նուիրագործել այն սկզբունքը, թէ ամեն գործերու մէջ, որոնք զուտ կրօնական հանգամանք չունին, հայեր, պաշտօնապէս վերոյիշեալ երկու եկեղեցիներէն որուն ալ պատկանին, միանան իբրև անդամներ միևնոյն ազգին։ Այս հասկացողութեամբ, ամեն հայ, պաշտօնապէս վերոյիշեալ երկու եկեղեցիներէն որուն ալ պատկանի, զուտ կրօնական չեղող ամեն խնդիրներու մէջ, հայ ազգային սահմանադրութենէն հաւասարապէս օգտուի։

«Այսպէս՝ կրթական, բարեգործական և ազգային քաղաքական ամեն գործերու մէջ, առանց բացառութեան, կատարեալ գործակցութիւն տեղի ունենայ։ Նոյն սկզբունքը գործադրուի անմիջապէս այն գործերուն մէջ և այն տեղերը, ուր կարելի է, իսկ աստիճանաբար՝ ուր, տեղական պատճառներով, անմիջական գործադրութիւնը անկարելի ըլլայ»։

Վերոյիշեալ համաձայնագիրն ստորագրած հայ բողոքականները հետևեալներն են. Յակոբոս Ճէճիզեան, դոկտ. Պ. Մաթթէոսեան, Յ. Գ. Գրիգորեան, Արսէն Շմաւոնեան, Արշակ Շմաւոնեան, Յովսէփ Ճէճիզեան, Պ. Գոնտայեան, Կ. Յ. Սթամպօլլուեան, Գրիգոր Շահպազ։

Իսկ հայ-լուսաւորչականների կողմից ստորագրած ազգ. երեսփոխանները հետևեալներն են. Հմայեակ եպ. Դիմաքսեան, Երուանդ Վ. Փէրտահճեան, Հայկ Խօճասարեան, Համբարձում Պօյաճեան, Ռուբէն Զարդարեան, Յարութիւն Շահրիկեան, Երուանդ Օտեան, Մարկոս Նաթանեան, Ժագ Սայապալեան, Վարդգէս Սէրէնկիւլեան։

Ազգ. ժողովի այդ նիստում յիշեալ համաձայնագիրը խանդավառ և բուռն ծափերի ընկերակցութեամբ միաձայն վաւերացվել է։

ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ

Ստացանք Բիբի-Էյբաթից՝ 1) օր. Շ. Մովսիսեանից 5 ր., 2) Է. Մովսիսեանից 10 ր., Ընդամենը 15 ր.։ Նախորդ նոր ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 248) ունենք ստացած ընդամենը 42 րուբլի։

—

Դպրոցական ֆոնդի համար մինչև օրս Թիֆլիս քաղաքում և մասամբ Թեմում ժողովվել են հետևեալ գումարները.

1) Թիֆլիսի վաճառականները իրանց աւագ պ. Արշակ Մելեանի ձեռքով ստորագրել են 5583 րուբլի և տօների առիթով էջմիածին գնացած պատգամաւորութեամբ Նորին Սրբութեան ներկայացրել. այդ գումարը նուիրել են 95 վաճառական։

2) Առաջնորդի մօտ եղած մատեանում 16 հոգի ստորագրել են 3068 ր. 80 կոպ.։

3) Յատուկ թերթերով քաղաքից և թեմից ստացվել է 1747 ր. 76 կ.։ Սակայն թերթերի մեծ մասը դեռ չեն վերադարձված, որպէսզի հնարաւոր լինի ամբողջ գումարի քանակը որոշել։ Թերթեր ստացվել են հետևեալ անձերից և հաստատութիւններից.

Յոմանեան դպ. ուսուցչական խմբից՝ 44 ր. 50 կ., Յոմանեան դպ. հոգաբարձութեան անդամներից՝ 100 ր., Գօրու գաւառի Ախալքալաքի գործ. Ղարաղաջ գ. 40 կ., Բախուրել գ. 24 ր. 87 կ., Վերին-Աղդան գիւղի դպրոցի վարչութիւնից և հասարակութիւնից՝ 51 ր. 50 կ., Արշակ ք. Յարութիւնեանի միջոցով՝ 12 ր., Շամշադինի գործ. Յովհ. ք. Բաղալեանի միջոցով՝ 50 ր., Ներսէս ք. Քարիմեանի միջոցով՝ 26 ր. 50 կ., Գրիգոր աւ.-ք. Մանդակունու միջոցով՝ 21 ր., Սահակ աւ.-ք. Սահակեանի միջոցով՝ 12 ր., բժ. Բ. Աղասարեանի միջոցով բժիշկներից 90 ր., Թիֆլիսի Ժողովարանից՝ 200 ր., Գաբրիէլ Ծաւրինեանից 25 ր., եղբ. Բոզարջեանների ծխախոտի գործ. ծառ. և բանւորներից՝ 28 ր. 80 կ., Գէորգ աւ.-ք. Աբուլեանի միջոցով՝ 15 ր. 55 կ., Գրիգոր ք. Շահնազարեանի միջոցով՝ 101 ր., Գ. Եարալեանից՝ 25 ր., քաղաքիս տրամվայի ծառայողներից՝ 43 ր. 90 կ., քաղաքիս մեչչինների և արհեստաւորների կողմից՝ 78 ր. 5 կ., Յովսէփ աւ.-ք. Աբուլեանից՝ 5 ր., Բ. փոխադարձ վարկի ծառայողներից 80 ր., Աշոտ ք. Թէմուրազեանից՝ 10 ր., Ղևոնդ ք. Ալիխանեանի միջոցով՝ 60 ր., Շամքոռեցոց ծխ. հոգաբարձութիւնից՝ 9 ր. 50 կ., Միքայէլեան հիւանդանոցի բժշկական խմբից՝ 135 ր., Լազոդաղի գործակալի միջոցով՝ 126 ր. 50 կ., տիկին Փեփրոնիա Զարդեղեանից՝ 200 ր., Ադելխանեանի գործ. ծառայողներից և բանւորներից՝ 29 ր. 75 կ., Թիֆլիսի գաւառի գործակալի միջոցով՝ 12 ր. 95 կ., Յովհաննէս Սպէնդիարեանից՝ 25 ր., Սղնախի գործակալի միջոցով 62 ր. 35 կ., Արասթումանի ծխական հոգաբարձութիւնից՝ 18 ր. 54 կ., քաղաքիս ս. Կարապետ եկ. ծխ. դպ. ուսուցիչներից՝ 13 ր. 50 կ.,

Առաջնորդ Թեմի՝ Մեսրոպ եպիսկոպոս

տուեթիւնը բեմական աքսեսուարի կողմից և դերասանական խմբի փոքրութիւնը։ Պատկերները փոխվում էին կարելոյն չափ արագ, դերասանները գիտէին իրանց դերերը գրեթէ անգիր, երգեցողութիւնը, պարերը, խմբային տեսարանները լաւ էին։ Միայն մի բան. երկրորդ և երրորդ պատկերների, այն է՝ Ֆաուստի սենեակի դեկորասիօնը ճիշդ չէր։ Ըստ պիէսայի՝ այդ սենեակը պիտի լինէր գօթական ճաշակով, այսինքն բարձր և սրածայր լուսամուտներ ու դուռն, գունաւոր ապակիներով։ Այն ինչ սենեակի փոխարէն քաշ էին արած ինչ-որ մոխրագոյն վարագոյրներ, որ չը գիտէիր՝ սենեա՞կ էին ներկայացնում թէ՞ ինչ-որ անորոշ տարածութիւն։ Բացի այդ՝ շատ աղքատ էր «Ֆաուստի» գրադարանը և գիտնականի համար անհրաժեշտ պարագաների թիւը։ Մարթայի սենեակի ետևի պատը բանտ էր ներկայացնում իր երկաթէ վանդակապատ լուսամուտով։ Այդ միևնոյն պատը զարդարում էր վերջին պատկերի մէջ բանտի խորքը։ Առաջին պատկերի մէջ վերևից խօսում էր Աստուած իր հրեշտակների հետ, իսկ ներքևից բեմի աջ կողմում վարագոյրապահի խցիկի դուռը շարունակ բացվում էր ու փակվում և առաջին շարքերի հանդիսականները տեսնում էին անցուդարձ անող բեմական ծառայողներին։ Տեղ-տեղ բոցերը կամ ժամանակից առաջ և կամ ժամանակից յետոյ էին վառվում։

Եւ այլ մի քանի այդպիսի դեֆեկտներ, որոնք, սակայն, շատ էլ չէին խանգարում տեսարանների գեղեցկութեանը։

Գալով դերակատարներին, ճիշդ է այն կարծիքը, թէ Ֆաուստ-Զարիֆեանը խաղի սկզբում բնական տոն չէր վերցրել։ Նա իւրաքանչիւր բառ արտասանում էր դանդաղ, միատեսակ, գրեթէ երգելով, և այդ՝ 5—6 պատկերների ընթացքում։ Մի բան, որ բաւական վնասում էր նրա խելացի, մտածված խաղին։ Բայց դերը սերտել և Ֆաուստին ուսումնասիրել էր վերին աստիճանի բարեխղճօրէն, որքան սակայն կարելի էր այդ անել երկու ամսվայ ընթացքում։ Ընդհանուր առմամբ նրա երիտասարդ Ֆաուստն անհամեմատ աւելի աջող էր, քան ծերունի Ֆաուստը։ Իսկ վերջին պատկերում, այն է՝ բանտում Մարգարտի հետ տեսակցելու միջոցին ուղղակի գովելի էր։

Գովելի էր այդ տեսարանում և տ. Աղամեան-Մարգարիտը։ Նա կարողացաւ դժբաղդ Մարգարիտի խելագարութիւնը պատկերացնել հոգեբանօրէն բաւական ճիշդ։ Առ հասարակ այդ դերասանուհին օժտված է բեմական ձիրքով։ Մի բան, որ նրան խանգարում է, միմիկայի աղքատութիւնն է, եթէ չասենք կատարեալ բացակայութիւնը։

Պ. Սևումեանը շատ բաւարար Մեֆիստոֆէլ կարող էր լինէր, եթէ չը լինէր նրա առոգանութիւնը այնքան տարօրինակ։ Հակառակ շատերի կարծիքին, նրա գրիմը ինձ դուր եկաւ, իսկ խաղի մէջ ես նկատեցի լուրջ մտածողութիւն։

Շատ հաւանելի էր տ. Լիսսի-Սևումեան Վհուկի դերում, և ռեժիսօրը շատ սրամիտ էր վարվել, որ նրան դուրս չէր բերել այլանդակ կերպարանքով։ Առանձնապէս ինձ դուր եկաւ տիկնոջ ինքնուրոյն պարը։

Միւս դերակատարներից պէտք է յիշել նախ և առաջ ամենաաջող տ. Յասմիկին Մարթայի դերում, ապա Մամիկոնեանին Զիբելի և Մանուէլեանին Վագների դերերում։ Առաջին պատկերում երեք հրեշտակները խօսում էին ձանձրալի միատեսակ։ Դա արդէն ռեժիսօրի սխալն է։

Շատ լաւ էին խմբային տեսարանները։ Փոքր դերասանուհիները և դերասանները, նաև ստատիստները անկշտամբելի էին։

Պ. Միրզոյեան երգեցիկ խումբը ղեկավարում էր ձիրքով, և չը կար մի երգ, որ մեզ վրա հաճելի տպաւորութիւն չանէր։

Մի խօսքով՝ արված էր բոլորը, ինչ որ հնարաւոր էր անել, բայց և այնպէս իբրև ներկայացում «Ֆաուստը» ձանձրալի էր։ Հետևաբար նրան պէտք է դուրս բերել ռեպերտուարից։

Թարգմանութիւնը բաւական լաւ է, թէև ունի մի քանի սխալներ ոճի կողմից։

Շիրվանզադէ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

Ստացանք Ալ. Քալանթարի անուան հիմնըվելիք ֆոնդի համար՝ 1) Թիֆլիսում պատրաստի հագուստեղէններ վաճառողներից՝ Աստուածատուր Յարութիւնեանի և Անտօն Տէր-Պետրոսեանի միջոցով հանգանակված—33 ր. 50 կ., 2) Օդեսսայի հայ գաղութից (Ս. Սուլխանեանցի միջոցով)—153 ր. 26 կ., 3) Վերին-Ազուլիսից՝ «Հախնազարեան, Աբրեան, Ներսիսեան և Ընկ.» Առևտրական Տնից—25 ր., 4) Վօրոնէժից՝ Ներսէս Տէր-Փանոսեանից—25 ր.։

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեշէդիսսէր, 2 նոյեմբ.

Խնդրում ենք ընդունել մեր սրտի խորքերից խորին ցաւակցութիւն և վիշտ հասարակական գործիչ և մեր բոլորից սիրված և յարգված Քալանթարի վաղահաս մահվան առիթով։

Դաւիթ Փանեան, գործակատարներ՝ Լևոն, Ղազար, Զօհրաբ, Յակոբ, Արշակ, Արտաշէս, Արսէն։

—

Ալէքսանդրօպօլ, 24 հոկտ.

Խրիմեան դպրոցի ուսուցչական դասը յայտնում է խորին ցաւակցութիւն խմբագիր, հասարակական գործիչ և կովկասեան գիւղատնտեսութեան անդուլ մշակ Քալանթարի վաղաժամ մահվան առիթով։

—

Ղաթարի հանքեր, 24 հոկտ.

Խորապէս վշտացած ենք, չենք ուզում հաւատալ ճակատագրի անգթութեան, որը վշտացրեց հայ ազգը, որբացրեց թանգագին «Մշակին»։ Նորից զգացվում է Արծրունու կորուստի ժամանակը։ Խելօք, հաւատարիմ, ազնիւ, համեստ, անմահ, թանգագին՝ հայութեան համար Քալանթարը դեռ երկար տարիներ կարող էր լինել օգտաւէտ։ Ծնկաչոք մեծ մշակի յաւիտենական յիշատակի առաջ մենք որբերս աղօթում ենք առ Աստուած տալ հանգիստ նրա աճիւնին, համբերութիւն հայ ազգին, որբացած «Մշակին» և թանգագին հանգուցեալի վշտացած ընտանիքին։

Անձամբ և նախագահ Ղափանի Հայոց Բարեգործական Ընկերութեան ճիւղի՝ Մելիք-Ստեփանեան

—

Ախալքալաք, 25 հոկտ.

Ողբում եմ տաղանդաւոր հասարակական գործիչ և անդուլ հրապարակախօս Քալանթարի վաղաժամ մահը, որովհետև բազում են կոչեցեալք և սակաւ ընտրեալք։

Յարութիւն Դիլանեան

—

«Մշակի» № 241-ում տպված հեռագրի մէջ Ալէքսանդրօպօլից՝ սխալմամբ մոռացված է Աստուր Խասհակեանի անունը։

—

Լօզօվայա-Պաւլօվկա, 7 նոյեմբերի

Ընդունեցէք խորին ցաւակցութիւն հասարակական գործիչ Ալէքսանդր Քալանթարի անսպասելի մահվան առիթով։

Մաշուրեանց, Մանասեանց, Փիրալեանց

—

Ժընև, 2 նոյեմբ.

Ժընևի հայ ուսանողների միութիւնը

ցաւակցութիւն է յայտնում հասարակական գործիչ Քալանթարի մահվան առիթով։

—

Բրիւսսէլ, 3 նոյեմբ.

Սրտամորմոք վշտակցում ենք տիտանական գործող, իդէալական ուսուցիչ, հայի բաղդ Քալանթարի անագորոյն մահվան համար սգահար ընտանիքին և խմբագրութեանդ։

Գայիանէ Պահլաւունի

—

Սօֆիա, 2 նոյեմբ.

Անփոխարինելի կորստի համար իմ սրտագին ցաւակցութիւնս եմ յայտնում։

Մկրտիչ Ներսիսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեքշաբթի, նոյեմբերի 6-ին, կ. Հ. Բ. Ընկերութեան մէջ կայացաւ խորհրդակցութիւն՝ յատկապէս հրաւիրված անձանց և խորհրդի անդամների մասնակցութեամբ։

Ինչպէս յայտնի է, կ. Հ. Բ. Ընկերութիւնը նպաստում է բազմաթիւ հայ-ծխական դպրոցների գիւղերում՝ այն գումարներով, որ նա ստանում էր ամեն տարի զանազան անհատներից կամ տոկոսիքներով այն գումարների, որ նուիրել են մի քանի բարերարներ։ Նպաստ տուողների թւում կար և Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդը, որ տալիս էր տարեկան 4000 ր. նպաստ։ Այդ նպաստը եկեղեցական խորհուրդը կրճատել էր այս տարվայ սկզբից և դրանով բաւական նեղ դրութեան մէջ դրել կ. Հ. Բ. Ընկերութեան, որ, չը ստանալով այդ նպաստը, չէր կարող նպաստել դպրոցների պահպանութեան։ Միւս կողմից զանազան գիւղական համայնքներից, ընկերութեան ճիւղերից հասնում են շարունակ խնդրագիրներ՝ օգնելու նոր դպրոցների բացման կամ եղածների պահպանութեան, բայց Ընկերութիւնը՝ չունենալով միջոցներ՝ ստիպված է մերժել։

Իբրև այդ վիճակին դարման տանելու համար՝ Ընկերութեան խորհուրդը հրաւիրել էր խորհրդակցութեան քաղաքիս ունևոր հասարակութեան անդամներին և պարզելով խնդիրը առաջարկեց օգնութեան հասնել։ Հայ հարուստներից շատերը՝ Մ. Արամեան, Ալ. Մէլիք-Ազարեան, Մկրտիչ Քալանթարեան, Ա. Միլեան, Ռոստոմ Մարտիրոսեան, Սէյլանեան, Ղորղանեան և այլք յօժարակամ պատրաստակամութիւն ցոյց տուին հոգալ գէթ 5 տարվայ ընթացքում մի երկու կամ երեք դպրոցների պահպանութեան համար անհրաժեշտ նպաստները (ամեն մի դպրոցի պահպանութեան համար իբրև նպաստ որոշված է 300 րուբլի) և ստորագրեցին 6600 ր. գումար տարեկան նպաստ՝ 5 տարի ժամանակամիջոցով, կամ որ նոյնն է՝ նուիրեցին 33,000 րուբլի։ Ապա որոշվեց նոյնպիսի օժանդակութեան հրաւիրել և այլ անձանց և դրա համար գումարել մի նոր խորհրդակցութիւն՝ աւելի մեծ ծաւալով և շատ անձանց մասնակցութեամբ։

Այս խորհրդակցութեանը մասնակցում էր և Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը։

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Ասում են, որ մենք, հայերս, մեր գործիչներին միայն լաւ թաղել գիտենք։

Սուտ է, սխալ է։

Եթէ ճիշդ է, որ մենք լաւ թաղել գիտենք, ապա ուր էին բազմաշխատ ուսուցիչ Գրիգոր Շահբուդաղեանի հազարաւոր աշակերտները, որոնք նրանից հայ լեզուով թօթօվել, կարդալ-գրել էին ուսել։

Եթէ իրաւ է, որ մենք լաւ յուղարկաւորել գիտենք, ապա ուր էին հանգուցեալի մանկավարժական գործունէութեան ընթացքում ունեցած բազմաթիւ պաշտօնակից ուսուցիչները, ինչու չէին մասնակցում յուղարկաւորութեանը։ Եւ, վերջապէս, եթէ խուռներամ բազմութեամբ թաղել գիտենք մեր գրականագէտներին, յայնժամ ուր էին գրականագէտ և թարգմանիչ Գր. Շահբուդաղեանի գրական արտադրութիւնների բիւրաւոր ընթերցողները։

Ինչու այս բոլորը չէին եկել իրանց վերջին յարգանքը մատուցանելու մեր անդաստանի արդիւնաւոր սերմնացաններից մէկին։

Այսպէս, ուրեմն, անշուք ու պարզ, անփառունակ կերպով, մի քանի տասնեակ մարդկանց և վարձւոր դիակակիրների ներկայութեամբ յուղարկաւորվեց և հողին յանձնվեց հայ վաստակաւոր գործիչներից մէկն ևս, նոյեմբ. 7-ին, Խօջիվանքի գերեզմանատանը, ուր դամբանական ճառ արտասանեց հանգուցեալի աշակերտներից Ցար. Գասպարեան, դրուատելով Գրիգոր Շահբուդաղեանի, որպէս ուսուցչի և գրականագէտի, արժանիքները։

Ներսիսեան հոգևոր դպրոցի վերատեսուչը մի քանի տասնեակ աշակերտներով մասնակցեց հանգուցեալի յուղարկաւորութեանը հիւանդանոցից մինչև Կուկիայի հայոց եկեղեցին։

Ց. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Кав.»-ի ստացած տեղեկութիւնների համաձայն, Վրաստանի էկզարխ Ալէքսէյ արքեպիսկոպոսը եկել է Սիմֆերոպօլ։ Անդրկովկասեան երկաթուղիների վարչութիւնը Սինէլնիկօվօ կայարանն է ուղարկել յատուկ վագոն՝ էկզարխին Թիֆլիս բերելու համար։

◆ Նոյեմբերի 17-ին կովկասեան քաղաքների ներկայացուցիչների համագումարը հանդիսաւորապէս կը բանայ քաղաքագլխի անձնափոխանորդ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը, որ կողջունէ համագումարը Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան և կազմակերպիչ մասնաժողովի կողմից, պարզելով իր ճառում համագումարի ծրագիրը։ Յետոյ կը լինի պրեզիդիումի ընտրութիւն։ Այդ օրը կը լինեն երկու զեկուցագիր։ Նոյն օրը ժամը $1^1/_2$-ին նշանակված է Զուբալօվների հաշւով կառուցված երեխաների հիւանդանոցի հանդիսաւոր բացումը։ Քաղաքային վարչութիւնը յանձնել է իր անդամ Մ. Աթաբէկեանին կազմակերպել ներկայացուցիչներին ընդունելու կարգը։ Որոշված է նաև խնդրել տեղական բոլոր ակումբներին՝ թոյլ տալ համագումարի անդամներին ձրիաբար մուտք ունենալ ակումբները համագումարի ընթացքում։

◆ Համաձայն ոստիկանական տեղեկութիւնների, նոյեմբերի 5-ին Կոստ. Խատիսեանի թաղման կարգադիր մասնաժողովի անդամ և Ղուկասեան թանգարանի կառավարիչ Գիւտ աւ. քահ. Աղանեան յայտնեց ոստիկանութեան, որ թանգարանից, կեղծ բանալիի օգնութեամբ, գողացել են կ. Խատիսեանի դագաղի վրա դրված 8 արծաթէ պսակները, իւրաքանչիւրը 150—1000 ր. արժողութեան, ընդամենը մօտ 5000 ր. արժողութեան։ Պսակները դրել էին հանգուցեալ Խատիսեանի դագաղի վրա Բագուի միլիօնատէրեր Հ. Զ. Ա. Թաղիեվի և Մուրթուզա Մուխտարօվի, Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան, Բագուի Կայսերական Ռուսաց Տեխնիքական Ընկերութեան, Բագուի քաղաքային ինքնավարութեան, Գեանջեցեանների, ընկեր ինժեներների և Բագուի նաւթարդիւնաբերողների համագումարի խորհրդի անունից։ Գողութեան մէջ կասկածված են Վանքի եկեղեցու բակի դռնապաններ Երևանի նահ. Էջմիածնի գաւառի Ղարաբուլաղ գիւղի բնակիչ Բարսեղ Կարապետեան Ումէրշատօվը և նրա փեսայ՝ եկեղեցում ծառայող միևնոյն գիւղի բնակիչ Յարութիւն Գրիգորեան Յակոբեանցը։ Երկու կասկածվողները կալանաւորված են, բայց իրանց յանցաւոր չը ճանաչեցին։ Նաև ձերբակալված և հսկողութեան տակ է առնված Գիւտ աւ.-քահանայի տպարանի կառավարիչը։ Ոստիկանութիւնը խիստ միջոցներ է ձեռք առել գտնելու յանդուգն գողերին։

◆ Թիֆլիսից «Н. В.»-ին հեռագրում են, որ Թիւրքիայից գաղթած 49 կօզակ ընտանիքների արքունի հողեր են տրված բնակավայր հիմնելու համար Քութայիսի նահանգի Նոտանէբիի մօտերը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հաստատել է էլեքտրաքարշի վրա հսկող դումայական մասնաժողովի որոշումը, որով անօնիմ ընկերութիւնը հարկաւոր թւով վագոններ չշխատեցնելուն համար ենթարկվում է տուգանքի՝ 9990 րուբլու սեպտեմբերին $19^1/_2$ օրվայ համար և 12,992 րուբլի՝ հոկտեմբերի համար։

◆ Քաղաքային բիւջէտային ֆինանսական մասնաժողովը 1914 թ. քաղաքային նախահաշւի մէջ մտցրել է 100 ր. նպաստ «Կօշէկ» ընկերութեանը. բժ. Գամբաշիձէին՝ թուլակուրծք երեխաներին պահելու համար տրվող 500 ր. նպաստը դարձրել է 600 ր. և այլն։

◆ Աբէլեանի կազմած դերասանական շրջիկ խումբը մեծ աջողութեամբ ներկայացումներ է տալիս Պարսկաստանում։ Ինչպէս հեռագիրը տեղեկացնում է, խումբը հրաւէր է ստացել խաղալ շահի պալատում։

◆ Կովկասեան մահմեդականները հարց են յարուցել, որ անհրաժեշտ է ներքին գործերի մինիստրութեանը կից կազմված խորհրդակցութեանը հրաւիրել, մահմեդական գործերի քննութեան համար, բացի տեղական հաստատութիւնների պաշտօնեաներից և հոգևոր անձերից՝ նաև ինտելիգենտ մահմեդականներ տեղական մահմեդական ընկերութիւններից։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բէյլիսի գործի դատավճիռը վերջնական ձևով յայտարարվելու է նոյեմ. 11-ին։ Բողոքագրքի համար ժամանակ է տրված մինչև նոյեմբ, 20-ը։ Բէյլիսը շարունակ ստանում է սպառնական գրութիւններ։

◆ Պետերբուրգում նորից լուրեր են պտտվում զինուորական մինիստր Սուխօմլինօվի հրաժարականի մասին։ Որոշակի խօսվում է, որ նրան փոխարինելու է Վարշավայի գեն. նահանգապետ Սկալօնը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՍՊԵՐՄԻՆ

ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ միակ իսկական սպէրմին է, որը բազմապիսի կերպով փորձված է և՝ շնորհիւ հասած փայլուն հետևանքներին՝ առաջադրվում է աշխարհիս բոլոր յայտնի գիտնականների կողմից նէվրաստէնիայի, սեռական թուլութեան, զառամութեան, իստէրիկայի, նէվրալգիայի, սակաւարիւնութեան, թոխախտի, ռիքիլիտի, սնդիկային բժշկութեան հետևանքների, սրտի հիւանդութիւնների (չաղութեան, սրտի պնդախտութեան, սրտի քարախման, պէրէբօյի, միօկարդիտի), զարկերակի կարծրացման, ալկոհոլիզմի, ողնաշարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից առաջացած յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ։ Առանձնապէս ուշադրութիւն պիտի դարձնել

ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ

անուան վրա և զգուշանալ սակաւարժէք ու անպէտք նմանողութիւններից, այսպէս անուանված՝ սերմնային գեղձերից պատրաստված մահլամներից, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։ Գրականութիւնն ուղարկվում է ձրի։ Սպէրմին-Պէլը կարող էք գտնել ամենուրեք։

ՊՐՕՖԵՍՕՐ ԴՕԿՏՕՐ ՊԷԼ և ՈՐԴԻՔ։ ՍՊԲ.
ՄԱՏԱԿԱՐԱՐ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. ԴՐԱՆ.

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

(П. 111297) 12—7

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏԻՐԱԺ
ՀԱՆԳԱՆ ՏՈՄՍԵՐԻ

Ш փոխառութեան, խաղացված նոյեմբ. 1-ին։

7301, 15205, 2830, 1207, 3490, 9150,
13967, 15584, 9510, 8080, 4117, 4525,
9189, 2950, 6950, 10843, 8060, 14519,
10958, 6267, 10706, 13130, 11054,
14852, 5870, 9975, 13600, 4254, 11349
15279, 2411, 4047, 14930 8948, 2028,
4850, 4683, 21, 2431, 14442, 639,
14957, 1299, 5379, 12051, 7760,
14008, 5296, 14499, 9188, 9453,
8501, 6366, 8394, 3595, 5505, 7857,
9998, 3338, 10179, 13005, 11321
2317, 598, 8632, 6291, 5412, 15785,
7874, 634, 9952, 3752, 7345, 13756
6089, 7609, 3872, 1118, 11242, 11600,
14267, 623, 14332, 14705, 7683
8580, 2817, 7052, 15965, 8165, 3644,
7686, 2965, 15711, 323, 5622, 4655
9798, 13333, 9006, 10545, 4138, 5791,
201, 11449, 4490, 11805, 13352, 8923,
8515, 13453, 593, 13008, 5975, 7014,
6720, 1589, 8838, 15601, 11861,
7353, 11773, 1393, 4139, 11518, 8820,
7682, 14638, 9974, 2404, 2715, 9864,
6683, 14317, 1342, 12961, 3726,
10860, 8994, 7439, 4429, 8548, 2512,
8553, 15206, 11393, 3317, 14770, 15109,
14085, 11457, 9904, 6235, 8682, 11104,
5271, 1948, 10620, 7685, 14260, 1042,
1897, 2604, 11255, 14839, 13692, 9288,
4528, 3734, 543, 11844, 9241, 10557,
4921, 12677, 13117, 6497, 2823, 4222,
13585, 12565, 3061, 10765, 7479,
1389, 13729, 2389, 10973, 9966, 7728,
6187, 5044, 8047, 15560, 301, 6566,
7125, 13342, 4965, 1371, 4561, 4357,
12294, 849, 4149, 11452, 8312, 12410,
1523, 14079, 245, 1743, 4393, 9989,
14535, 8917, 6412, 3921, 8066, 4298,
697, 14015, 1456, 7193, 9819, 5177,
13233, 13099, 1625, 11128, 2671, 4590,
14274, 7132, 8663, 7933, 2187, 12972,
3569, 9791, 3797, 5411, 4791, 3245,
13960, 12174, 15670, 6828, 5784, 10118,
363, 2749, 1065, 9817, 4419, 14482,
2740, 2664, 13995, 1842, 4684, 15848,
15564, 3349, 2324, 15898, 7309,
12133, 3110, 6180, 12461, 7418, 9271,
8506, 10151, 11544, 4358, 11716, 5147,
4627, 11952, 469, 729, 6954, 2833,
6672, 10117, 13604, 15338, 1462, 6011,
5478, 8452, 12624, 13109, 14428, 4160,
8175, 12652, 4541, 15064, 2777, 15377,
7308, 4239, 3521, 3480, 939, 1809,
11783, 12525, 57, 777, 427, 4765, 8860,
14692, 3508, 10677, 14674.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԲԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ք ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Կ. Դ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկահատ։ Արեան, մէզի, խուխի հետազօտութիւն։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Կ. Դ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—101

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8, Սիմեօնօվսկայա փող., № 18 (Վորոնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սիմեօնօվսկայա, № 16.

(չ.ու.կ.) 804. 100—18

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եղբ. Աւարգիսովների

այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ չափաւոր գներով։ Կատալոգները ուղարկվում են ՁՐԻ։

Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж.д.), Авсаркисову.
(ե.հ.կ.) 922. 14-10

ՀԱԶԻԱԳԻՒՏ ԴԷՊՔ

ԿԸ ՀՄԱՅՎԷՔ

տեսնելով մեր առարկաները և կը զարմանաք՝ թէ որքան էժան գներ ենք նշանակել, երբ համոզվէք մեր ապրանքի լաւ յատկութեան մէջ։

ՄԻԱՅՆ 4 Ր. 95 ԿՕՊԷԿՈՎ ուղարկում ենք արժէք. և օգտ. առարկաների հետևեալ գարնիտուրը. 1) բացանի գեղ. ժամացոյց, մօդային, սև պողպատից, շատ տափակ, լարում կոթից՝ 40 ժամը մի անգամ, անկեր. իսկ. ընթացքով, քարերով.կամ թէ կանացի ցիլինդր. ժամաց.,մինչև բոլտները սուզված անպայման ուղիղ ընթացքով, 6 տարվայ երաշխաւորութեամբ։ 2) Մօդային շքեղ շղթայ՝ երկշարք, «Դուբլէ» իսկ. մետաղից, էլեգանտ ձևի։ 3) Զատ հետաքրքր. բրելօկ։ 4) Ժամաց. համար զամշեայ քսակ։ 5) բտասամ. կաշուց պորտմոնէ 6 բաժ. և մետ. փականով, պարիզեան շքեղ շինուածք 6) Կաուչուկէ կնիք՝ ապսպրողի անուն-հօրանուն-ազգանունով։ 7) Ժամաց. գողերից պաշտպանող իր։ 8) Թատր. բինօկլ, էլեգանտ շինուածք, ախրոմատ. 4 ապակիով, որ մօտեցնում է իրերը ամենահեռու տարածութ. վրա։ 9) Խոշորացոյց—կենդանի պանօրամա, որ ցոյց է տալիս միանգամայն բնական կերպով։ 10) Վեց հատ ամենահետաքրքր. պատկերներ խոշորացոյցի համար։ 11) Շքեղ ընծայ կանանց համար, որ բաղկացած է դուբլէ ոսկուց շինված մատանուց՝ ֆրանս. ադամանդներով, բրօշկայից և մի զոյգ օղերից։ 12) Ձն. տպարան՝ որ պարունակում է մօտ 120 կաուչուկէ տառեր և թւանշաններ. անհրաժեշտ իր ամեն մի տան համար։ 13) Գրպանի շատ յարմար պրիբօր նիկէլից։ 14) բացանի նէսէսէր՝ 4 հետաքրքր. առարկ.։ 15) ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՅԹ! Րէվօլվեր—գրպանի մշտական վառելիք։ 16) Կախարդ. հետաքրքր՝ գրքոյկ, որ պարունակում է մօտ 100 նորագոյն ֆօկուսներ։ Ամբողջ գարնիտուրի գինը 4 ր. 95 կ., իսկ 2 գարնիտուրը՝ 9 ր. 30 կ.։ Յղկիսի գարնիտուրը ամենաբարձր յատկ. առարկ.—5 ր. 70 կ., 2 հատը՝ 10 ր. 80 կ.։ Իւրաքանչիւր գարնիտուրը փակ ժամացոյցով՝ 1 րուբլի թանկ։

Խորհուրդ ենք տալիս բերել տալ լաւ տեսակը, որովհետև գնի մէջ զանազանութիւնը շատ քիչ է, իսկ յատկութեան մէջ զանազանութիւնը շատ։ Ուղարկում ենք վերադիր վճ. և առ. կանխավճարի։ Ճանապարհածախսը 45 կ.։ (Սիբիր 80 կ.)։

Հասցէագրել՝ Т-во «ПАТЕНТЪ». Варшава, Св. Креста отд. 124.

(18, 28) 3—1

КОНТОРА М. А. ГАЖОНІЯ

переведена съ 1-го ноября с. г. въ Пушкинскій пассажъ № 20 и принимаетъ объявленія въ мѣстныя и иногороднія газеты. Условія льготныя и выгодныя. Исключительное представительство нѣсколькихъ редакцій. Тамъ-же и пріемъ рекламъ на Тифлис. трамвай. 2-й адресъ—гост. „Ветцеля“, телеф. 830; кв. Ваке, с. д. телеф. № 925.

(ա.օ.) 988. 5—5

ԳԱՅԻԱՆԵԱՆ ԴՊՐ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

խնդրում է Մողնու եկ. ծխականներին, կիրակի, նոյեմբերի 10-ին, ցերեկ. ժամը 12-ին, շնորհ բերել դպրոց, ուր սրբազան առաջնորդի թոյլտւութեամբ ժողով է լինելու։ Ժողովի զբաղման առարկաներն են՝ անցած տարվայ ելից և մուտից հաշիւների վերստուգութիւնը և այս տարվայ նախահաշւի քննութիւնը։ Նոյն ժողովին պիտի ընտրվի երեցփոխ եկեղեցու համար։ Ներկայ ժողովը երկրորդ անգամը հրաւիրվելով՝ կը կայանայ որքան ծխական էլ ներկայ լինի։

1004. 2—2 Նախագահ հոգաբարձութեան՝ Նիկ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24) ունկնդիրների խոշոր թիւ լինելու պատճառով, բացվում է զուգընթաց նոր բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակ է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից։ Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր՝ ցերեկվայ ժամը $11^1/_2$—12-ը և երեկ. ժամը 5—6-ը։

(ու. կ. չ.) 973. 5—4

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ հայոց եկեղեցական-ծխական հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, որ՝ Վրաստանի և Իմերէթի հայոց վիճակային կօնսիստորիայի 1913 թ. յուլիսի 5-ի № 3167 առաջադրութեան՝ Ախալքալաքի և Ծալկայի գաւառների գործակալութեան իշխանութեան ներքոյ գտնված բոլոր 67 եկեղեցիների

ՄՈՄԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆԸ ՏՐՎՈՒՄ Է ԿԱՊԱԼՈՎ

Աճրդախօսութիւնը լինելու է առաջիկայ դեկտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին, ծխական դպրոցի հոգաբարձական խորհրդարանում։

Կապալի պայմաններին մանրամասն ծանօթանալու համար ցանկացողները կարող են դիմել Ախալքալաքի ս. Խաչ եկեղեցու երէցփոխ պ. Ց. Մերկելեանին։

Ի. տ. հոգ. նախագահ՝ Ց. Շէխոյեան
(օ.մ.) 987. 3—3 Քարտուղար՝ Կ. Ամատունի

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետևեալ հրատարակութիւնները

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրձինի, I և II հատորներ	1 ր. 50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի	40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի	40 կ.
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ	15 կ.
6) ՋԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի	50 կ.
7) ԿՆՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ր.
8) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	40 կ.
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի	40 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	35 կ.
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	15 կ.
12) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ Մ-ի	15 կ.
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	30 կ.
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	25 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի	80 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր. 50 կ.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլէրի, Թարգմ. Իս. Յարութիւնեանի.	40 կ.
18) ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եզեկեանի.	15 կ.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.	20 կ.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շիւեանի	20 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շիւեանի.	25 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղջ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղջ կը լինի միայն 25%.

(6) 10—9

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный